ՀԱՅՈՑ ԲՆՕՐՐԱՆ ՀԱՅՔԸ
ՆԱԽԱՍԿԶԲՆԱԿԱՆ ԵՐԿԻՐ, ԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՍՐԲԱԶԱՆ ԿԱՑԱՐԱՆ, ՏԱՊԱՆԻ ՀԱՆԳՐՎԱՆԻ ԼԵՌ - DU_6-KU_3, ^{KUR}NI.MUŠ

Համլետ Մարտիրոսյան
Հնագույն քաղաքակրթությունների
հետազոտման կենտրոն

1. Համաշխարհային ջրհեղեղի մասին պատմությունները

Համաշխարհային ջրհեղեղի մասին պատմությունները հանրահայտ են և հայտնի են աշխարհի տարբեր անկյուններից: Այստեղ կանդրադառնանք այդ պատմություններից հնագույններին, որոնք հայտնի են հին Առաջավոր Ասիայից: Ջրհեղեղի մասին հնագույն գրավոր վկայությունը շումերական է և մեզ հասած հնագույն տեքստը վերաբերում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբին: Սեպագրության ժամանակներում (մ.թ.ա. 3÷1 հազարամյակներ) թեման տարածված էր Առաջավոր Ասիայում և հարակից տարածքներում (Հունաստան, Հնդկաստան և այլն):

Ջրհեղեղի վերաբերյալ տարբեր լեզուներով և տարբեր ժամանակներից մեզ հասած գրավոր աղբյուրները նշում են, որ ժամանակակից մարդկության նախնիները ջրհեղեղից փրկվել են Հայաստանում: Սակայն նույն աղբյուրներից մեզ են հասել տապանի հանգրվանի լեռան հետևյալ տարբեր անվանումները. Արարատ (=Մասիս), Ջուդի (=Արարադ), Կորդուենա (= ?), Լուբար (= ?), Բարիս (= ?) և ^{KUR}NI.MUŠ կամ ^{KUR}Nişir (= ?): Այս աշխատանքում պիտին ջանանք մեկնաբանել այս անվանումներից որոշները և վերցնել հարցականները:

Անկախ նրանից, ջրհեղեղի պատմությունը հիշողություն է իրական ու կործանարար աղետի մասին, թե այն այլաբանական իմաստ ունի և առասպելական է,

այս բոլոր պատմությունների համար անշուշտ գոյություն է ունեցել մի նախնական սկզբնաղբյուր, որում նշվել է տապանի կանգառի մի տեղանուն:

Հետևաբար հարց է առաջանում, թե ո՞րն է եղել նախնական տեղանունը, ինչպե՞ս, ե՞րբ են առաջացել վերը նշված տեղանունները և ինչ առնչություն ունեն նախնական տեղանվան հետ: Նաև այս հարցերին է, որ պիտի փորձենք պատասխանել այս աշխատանքում:

Հայտնի են ջրհեղեղի պատմության հետևյալ տարբերակները.

Շումերական – Ջրհեղեղից փրկվող առաքինի մարդը հիշատակվում է ZI.UD.SUD.RA(2) անունով: Փրկության ուղին և տապանի ձևն ու կառուցման միջոցը նրան ցույց է տալիս ^{d}EN.KI=^{d}E$_{2}$A=Հայ Աստվածը: Տեքստի վնասվածության պատճառով անհայտ է մնում տապանի հանգրվանի վայրի անունը: Աստվածները նրան անմահություն են պարգևում և բնակեցնում ^{KUR}NI.TUK=^{KUR}ya$_{3}$-tuk=^{KUR}yatuk=Յատուկ երկրում, որը շումերական Եդեմն է և տեղայնացվում է Հայքի տարածքում: Որպես ածական, NI.TUK=yatuk բառը նշանակում է «կարևոր, նշանակալից, հատուկ» և ներկայացնում է բնիկ հայերեն «յատուկ, հատուկ» նույնիմաստ բառը: ^{KUR}NI.TUK = Յատուկ երկիրը ^{d}E$_{2}$A=Հայ Աստծո ստեղծածն է, Երկրի վրա նրա սրբազան կացարանի անուններից մեկն է:

Հին բաբելական – Այստեղ ևս մարդկության փրկիչը Հայ Աստվածն է, իսկ առաքինի մարդը ներկայացվում է Atra(m) Hasis=«Atra(m) իմաստուն» անունով (AT.RA.AM HA.SIS, AT.RA HA.SIS): Սա անձնանվան ժամանակակից ընթերցումն է, որում HA.SIS բաղադրիչը կրում է «իմացող, իմաստուն» իմաստ (աքքադերեն փոխառյալ ձևն է hāsisu) և ներկայացնում է հայերեն հաս=«հասկացող, իմացող, կատարյալ, հասուն» բառը: Ջրհեղեղից փրկվածի բուն անունն է AT.RA.AM, որի մեջ մտնող AT, AD սեպանշանի հիմնական իմաստն է «հայր, ծնող»: At, ad=«հայր, ծնող» բառն առկա է ինչպես հայերենում (հմմտ. աղէ=«մեծ մայր, մայր»), այնպես էլ աշխարհի շատ լեզուներում: Անվան RA.AM=ram բաղադրիչն էլ ներկայացնում է բնիկ հայերեն երամ=«մարդկանց կամ կենդանիների խումբ, ժողովուրդ» բառի սղված

ռամ=«ժողովուրդ» ձևը: Վերջինից ունենք ռամիկ=«հասարակ ժողովուրդ» բառը, որը հաճախ է գործածվել Հայոց ոսկեդարյան մատենագրության մեջ:[1]

Առայսօր գրականության մեջ չի ներկայացվել և չի քննարկվել Atra(m) Hasis անվան այլ համարժեք ընթերցումը, որն այնքան ակնհայտ է, որ անհնար է աչքաթող անել: Բանը նրանում է, որ AD սեպանշանը «հայր, ծնող» իմաստի համար ունի նաև ab_3 ընթերցում: Ab, ap=«հայր» բառը (հայերեն՝ ափո, ափու, ապի, ապայ և այլն) փոխառությամբ անցել է աքքադերենին (abu=«հայր, ծնող»), աքքադերենից էլ՝ մյուս սեմական լեզուներին: Հետևաբար անվան մյուս՝ համարժեք ընթերցումը կլիննա Ab_3-ra-am=Abram=Աբրամ ձևը: Երկու դեպքում էլ (Adram, Abram) այս անձնանունը կնշանակի «հայր ժողովրդի»: Անշուշտ ջրհեղեղից փրկված մարդուն այս անունն է տրվել, քանզի նրանից են ծագել ժողովուրդները՝ հետջրհեղեղյան մարդկությունը: Այս անունն է, որ հրեաները դարձրել են իրենց առասպելական նախահոր անուն, որը հետո իրենց «աստծո որոշումով» դարձվել է Աբրահամ:

Այս տարբերակում ևս տեքստի վնասվածության պատճառով անհայտ է տապանի կանգառի վայրի անվանումը:

Բաբելական – Այստեղ ջրհեղեղից փրկված առաքինի մարդը հիշատակվում է UD.ZI կամ U_2-TA-NA-IŠ-TIM անունով: Անվան վանկագիր ձևը գրականության մեջ ներկայացվում է Ūta-na’ištim կամ Ut-napišti ձևով: Սրան ևս Հայ Աստվածն է ցույց տալիս փրկության ճանապարհը: Ջրհեղեղի պատմության այս տարբերակում տապանի հանգրվանի լեռը հիշատակվում է ^{KUR}NI.MUŠ անունով, որն էլ այս աշխատանքի քննության հիմնական նյութերից մեկն է:

---

[1] . Ելնելով պարսկերեն ram, rama=«կենդանիների հոտ, խումբ» բառի գոյությունից, լեզվաբանները ենթադրում են, թե միջին պարսկերենում (պահլավերենում) գոյություն է ունեցել նույնիմաստ *ram, *rama բառ, որից էլ իբր հայերենը փոխ է առել «ռամ», «երամ» բառերը: Սա կեղծ ստուգաբանություն է, քանզի իրանալեզու ցեղերը ներկայիս Իրանի տարածքում հայտնվել են մ.թ.ա. 8-րդ դարում, իսկ «երամ» բառը սեպագրության ժամանակներում գործածական է եղել սկսած Շումերի վաղ դինաստիական ժամանակներից (մ.թ.ա. 3000թ): Խոսքը վերաբերում է մ.թ.ա. 3000÷1500թթ շումերերենում վկայված erem, erim, $eren_2$, $erin_2$= «ժողովուրդ, խումբ» բառին (աքքադերեն ṣābu): Փենսիվանիայի համալսարանի շումերերենի էլեկտրոնային բառարանը բերում է այս բառի գործածության 2722 վկայություն;

Հայերեն բառը պահլավերենից փոխառություն դնելու գործում որոշիչ դեր է խաղացել նաև հայերի հնդեվրոպական ծագման կեղծ տեսությունը, որը հայերին զրկում է մ.թ.ա. 6-րդ դարից առաջ Հայկական լեռնաշխարհում ստեղծված մշակույթի հեղինակը լինելու իրավունքից:

Այս փաստերից բնականաբար բխում է, որ իրականում պարսկերեն ram, rama բառն է փոխառություն հայերենից, իսկ պահլավերենում նման բառ պարզապես գոյություն չի ունեցել:

Բերոս – Այս տարբերակը հունարեն լեզվով է, որի հեղինակը հելլենիստական շրջանի բաբելական քուրմ Բերոսն է (մ.թ.ա. 3-րդ դար): Բերոսը ջրհեղեղից փրկվողին ներկայացնում է Քսիսութրոս (Ξισουθρος) անունով, իսկ փրկության ուղին ցույց տվող Աստծուն անվանում է Ժամանակի Աստված (հունական Κρόνος): Բերոսի հաղորդմամբ, Քսիսութրոսի նավը կանգ է առնում Հայաստանում:

Այնուհետև Բերոսը հաղորդում է, թե իր ժամանակներում տապանի մնացորդները դեռևս գտնվում էին Հայաստանի Կորդվաց լեռների վրա: Այսինքն, նա չի նշում որևէ հստակ լեռան անուն, այլ բերում է հոգնակի Կորդվաց լեռներ ձևը: Բերոսի շարադրանքից կարելի է եզրակացնել, որ նրա աղբյուրը, որպես փրկության վայր, նշել է միայն Հայաստանը: Իսկ Կորդվաց լեռները, որպես տապանի մնացորդների վայր, նրա հավելումն է, որպես Բերոսի կամ նրանից առաջ ձևավորված առասպել: Նման տապանի մնացորդների մասին այն առասպելներին, որ ձևավորվել են նաև Մասիսի վերաբերյալ:

Բերոսի հաղորդած տվյալներից բխում է, որ ջրհեղեղը տեղի է ունեցել մոտ 37.500 տարի առաջ, իսկ ըստ շումերական արքայացուցակի տվյալների՝ մոտ 36.000 տարի առաջ (նախավերջին սառցապատման հալոցքի ժամանակաշրջան): Ըստ ժամանակակից երկրաբանական տվյալների, ջրհեղեղը (համաշխարհային օվկիանոսի մակարդակի բարձրացումը) տեղի է ունեցել մոտ 12.000 տարի առաջ (վերջին սառցապատման հալոցքի ժամանակաշրջան):

Բերոսից այս տվյալները բերում է բյուզանդական պատմիչ Գեորգիոս Սինկելլոսը (8÷9-րդ դարեր) նշելով, որ դրանք քաղել է Ալեքսանդր Պոլիգիստորի (մ.թ.ա. 1-ին դար) աշխատությունից:

Տապանի մնացորդների գտնվելու վայրի մասին հատվածը մեջ է բերում նաև հրեա պատմիչ Հովսեպոս Փլավիոսն իր «Հրեական հնախոսություններում» (1-ին դար), սակայն ի տարբերություն Սինկելլոսի, լեռան անունը հիշատակում է եզակի թվով՝ Կորդուենա լեռ: Այնուհետև Հովսեպոս Փլավիոսը հղելով Նիկողայոս Դամասկեցու վրա, գրում է, թե ջրհեղեղից փրկվածների տապանը կանգ է առել Հայաստանի Մինիադա մարզից վեր (հյուսիս) գտնվող Բարիս լեռան վրա: Հայաստանում այս անունով տաճար է հիշատակում Ստրաբոնը, որի տեղը դեռևս ճշգրտված չէ: Նկարագրությունից կարելի է հետևություն անել, թե տաճարը գտնվել է Հայքի Արարատ/Այրարատ աշխարհում:

Հին Կտակարան – Ջրհեղեղի պատմության այս տարբերակում առաքինի մարդը ներկայացվում է Նոյ անունով (Noah): Ծննդոց գիրքը հաղորդում է, որ Նոյի տապանը հանգրվանել է **ի լերինս Արարատայ**=«Արարատ (երկրի) լեռների վրա», որը հունարեն έπι τά όρη τά Αραράτ գրության թարգմանությունն է: Ծննդոց գրքի լատիներեն թարգմանության մեջ սրանց դիմաց super montes Armeniae=«Հայաստանի

լեռների վրա» արտահայտությունն է: Հրեա պատմիչ Հովսեպոս Փլավիոսն (1 դար) իր «Հրեական հնախոսության» մեջ գրում է, թե Նոյի տապանը կանգ առավ ինչ որ լեռան գագաթին Հայաստանում: Այսպիսով, Հին կտակարանը և նրան հետևող հետագա աղբյուրները նշում են, որ ջրհեղեղի փրկության երկիրը Հայաստանն է, բայց չեն հիշատակում որևէ լեռան անուն: Բացառություն է «Հոբելյանների գիրքը», որում լեռը հիշատակվում է այլուստ անծանոթ Լուբար անունով:[2] Ըստ Հին կտակարանի ժամանակագրության, Նոյի ջրհեղեղը տեղի է ունեցել մ.թ.ա. 3-րդ հազարամյակում, ինչը հակասում է հնագիտական և երկրաբանական տվյալներին:

Ջրհեղեղի պատմության վերոհիշյալ տարբերակներից տապանի հանգրվանի վայրի վերաբերյալ սեպագիր աղբյուրները հաղորդում են ^{KUR}NI.MUŠ տեղանունը, որի KUR ցուցիչը կարող ենք ընթերցել «երկիր» կամ «լեռ»: Մյուսը՝ Բերոսի հաղորդած «Կորդուենա լեռ» անվանումն է: Գրականության մեջ սովորաբար այս երկու անվանումները համարվում են լեռնանուններ:

Իսլամական աշխարհում տարածված է տապանի լեռան ջերել Ջուդի=«Ջուդի լեռ» անվանումը (թուրքերեն՝ Ջուդի դաղ), որը գալիս է Ղուրանից և գտնվում է Կորդուքի հարավային մասում: Հետազոտողների կողմից սա նույնացվել է Կորդուենայի հետ:

Կորդուենա անվանումը համահունչ է Հայքի Կորճայք աշխարհի Կորդուք գավառի անվան հետ, ինչն էլ հավանաբար հիմք է հանդիսացել, որպեսզի Բերոսի հիշատակած Կորդուենա անունը (սիրիական աղբյուրներում՝ Qardū) տեղայնացվի Կորդուքում և նույնացվի ժամանակակից Ջուդի լեռան (բարձրությունը 2089մ) հետ: Պլինիոս Ավագը Կորդուք անունը կապում էր կորդ/կորտ/զորդ ենթադրյալ ցեղանվան հետ:

Աննշան բարձրություն ունեցող այս լեռը տապանի լեռան հետ նույնացնելու հարցում կարծում եմ որոշիչ դեր է խաղացել նաև այն փաստը, որ լեռան գագաթի ուրվագիծը նման է նավի՝ տապանի:

---

[2] . «Հոբելյանների գիրքը» Հին կտակարանի պարականոն գրքերից է և ենթադրվում է, թե գրառվել է եբրայերեն, մ.թ.ա. I դարում: Լեռան Լուբար անվանումը կապում եմ աքքադերեն *labāru* = «ծեր, հին, նախնական» բառի հետ, որը մեկնությունն է շումերերեն IGI.EŠ$_2$=igi-nah$_2$=ակն նախ= «առաջին կյանք» (շումերերենում igi=ակն բառը գործածվել է և «աչք, աղբյուր» իմաստով, և «կյանք» իմաստով) գրության կամ IGI.EŠ$_2$=igi-ger$_{15}$ = ակն գեր, որտեղ բնիկ հայերեն ger$_{15}$=գեր=«բոլորից առավել, բոլորին գերազանցող» բառն ունի նաև «աստված» իմաստ: Ստորև կտեսնենք, որ նման բնութագրերը յուրահատուկ էին միայն Հայքին (նախասկզբնական երկիր, կյանքի արարման վայր, քաղցրահամ ջրերի ակունք և այլն):

Ջուդի լեռը

Հին կտակարանի և սիրիական աղբյուրների տվյալները համաձայնեցնելու նպատակով հայ մատենագիրների կողմից Ջուդի լեռը երբեմն հիշատակվել է Արարադ/տ անունով:

Խիստ լեռնային, խոր կիրճերով կտրտված Կորդուքը երկրագործության համար ոչ պիտանի տարածք է և նրա անվանումը իրականում կարող ենք բխեցնել հայերեն կորդ=«վարելու համար ոչ պիտանի, խոպան, անմշակ» բառից, որին կցվել է «-ք» տեղանվանակերտ ածանցը:

Մյուս կողմից, քանի որ Բերոսի հիշատակած **Կորդու**-*ենա* անունը կապված է համաշխարհային ջրհեղեղի հետ, ամենայն հավանականությամբ պիտի ունենա դիցական իմաստ և այլ ծագում: Քանի որ այս անվանաձևի առաջին հիշատակողը մ.թ.ա. 3-րդ դարի բաբելական քուրմ է, ապա բնական է կարծել, որ անվանումը վերցված է սեպագիր աղբյուրներից:

Նախ լեռան անվան ծագումը համարենք հայերեն, որի համար առաջարկենք *Կառդու նախաձևը, կազմված կառ=«վառ, բռնկուն» և դու=«բլուր, լեռ» պարզ արմատներից: Ուստի տեղանունը պիտի կրեր «բռնկվող, վառվող, փայլուն բլուր/լեռ» իմաստ: Այս անվանաձևի գոյության հիմնավորումը սկսենք հայերեն դու=«բլուր, լեռ» բառի գոյության քննությամբ:

2. Սրբազան Դու բլուրը/լեռը

Խոսելով Հայոց Խոսրով թագավորի կողմից Ազատ գետի հովտում անտառ տնկելու ու Դվինում պալատ կառուցելու մասին, Խորենացին գրում է. «... ըստ

պարսկական լեզուին Դուին կոչի, որ թարգմանի բլուր»: Լեզվաբանները իրանական ոչ մի լեզվում չգտնելով «բլուր» իմաստով նման բառ, մնացել են տարակուսած: Սակայն նրանց ուշադրությունից վրիպել է այն կարևոր փաստը, որ Խորենացու «Հայոց Պատմության» որոշ ձեռագրերում «պարսկական» բառի փոխարեն առկա է լեզվի «պատուական» բնութագիրը: Ակնհայտ է, որ արտագրող որոշ գրիչների կողմից «պատուական լեզու» արտահայտությունն ընկալվել է «պարսկական լեզու» և նրանցից էլ տարածվել ուրիշներին:

Խորենացու տված «պատուական» բնութագիրը վերաբերում է այն լեզվին, որում **դուին** =«բլուր» բառը, որպես աշխարհընկալումային առանցքային էլեմենտ, գործածվել է սկսած վերին հին քարի դարի ժամանակներից (Սյունիքի ժայռապատկերներ), վկայվել է միջագետքյան ու եգիպտական աղբյուրներում (Ք.ա. IV հազ. վերջ) ու վերադարձել Խորենացու ժամանակների հայերենին:

Շումեր – Շումերերենում հայերեն **դու**=«բլուր/լեռ» բառի զուգահեռն է DU6 սեպանշանի du6=դու=«բլուր» ընթերցումը (աքքադերեն *tīlu, mūlū*): Այս սեպանշանը ծագել է շողարձակող, բոցավառվող բլրի/լեռան սխեմատիկ պատկեր ներկայացնող նշանագրից:



DU6 նշանագիրը , նրանից ծագած շումերական և բաբելական սեպանշանները:

DU6 նշանագրի գործածության հնագույն վկայությունը հասնում է մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջին քառորդ: Ստորև բերված է այդ ժամանակաշրջանում նշանագրի գործածության մի նմուշ:



Այստեղ համապատասխան նշանագրերով գաղափարագրվել են GAL=գաղ=«մեծ, խոշոր» և DU6=դու=բլուր/լեռ բառերը: Ուստի այս երկու նշանագրերի կցագրությունն արտահայտում է «մեծ լեռ/բլուր»:

Այս ընդհանրական՝ աշխարհագրական «բլուր, լեռ» իմաստից զատ, du$_6$=դու բառը գործածվել է նաև «Աստծո գահի պատվանդան, տաճար, սրբավայր» իմաստներով (աքքադերեն dû, di'u, tu'u, ţû, որոնք փախառություն են շումերերենից):

Սեպագիր բառարաններում du$_6$=դու բառի համար բերվում են աքքադերեն հետևյալ զուգահեռները.

դու= du$_6$ = tīlu (=բլուր)

= dû (=ինչ որ Աստծո գահի պատվանդան, տաճար, սրբավայր)

= dû niq$_2$ AN (=գահ Աստծո, հիմք Երկնքի)

= bītu (=տուն, տաճար)

= šubtu (=գահ, նստավայր)

= parakku (=գահ, պատվանդան, տաճար, սրբավայր):

Եթե ամփոփենք այս իմաստները և ուրվագծենք du$_6$=դու բառով արտահայտված բնապատկերը, ապա վերականգնվում է հետյալ նկարագիրը. du$_6$=դու բառով ներկայացվել է այն բնական կամ արհեստական բլուրը/լեռը, որի վրա կառուցվել է տաճար կամ բագին:

Հնագիտական տվյալները վկայում են, որ Հին Աշխարհում սրբավայրերը կառուցվում էին բնակավայրերի ներսի կամ նրանց հարող բարձրունքների վրա: Այս ավանդույթը շարունակվել է քրիստոնեական ժամանակներում և եկեղեցիները կառուցվել են բնակավայրերի բարձրադիր վայրերում:

Ունենք նաև այս թեմային վերաբերող մի կարևոր տվյալ ևս: Իր վրա տաճար, բագին կրող բնական կամ արհեստական բլուրը սեպագիր աղբյուրներում բնութագրվել է KU$_3$ սեպանշանի kuk, kug կամ ku$_3$, qu$_5$ ընթերցումներով. du$_6$-kuk կամ du$_6$-qu$_5$: Այս բնութագիրը կրող բլրի/լեռան համար վերականգնվել է «ինչ որ պաշտամունքային և տիեզերական նշանակության տեղ» իմաստ: Սրա աքքադերեն զուգահեռը գոյություն չունի: Այս տիեզերական նշանակության բլրի/լեռան անվանումը վկայված է Շումերի վաղ դինաստիական ժամանակներից (տես ստորև աղյուսակը):

dukug [LOCUS] (ED IIIb, Old Akkadian, Ur III, Early Old Babylonian, Old Babylonian) wr. du$_6$-kug "a cultic and cosmic place" Akk. ?

[1] du$_6$-kug (du$_6$-ku$_3$)

	3500	3000	2500	2000	1500	1000	(no date)
[1]		11	198	60			

Տիեզերական բլրի/լեռան անվան գործածության վիճակագրությունն ըստ տարեթվերի (մ.թ.ա.)։ Աղյուսակը բերված է Փենսիլվանիայի համալսարանի շումերերենի բառարանի էլետրոնային կայքից։

Բլրի du_6=դու=«աստծո զահի պատվանդան, տաճար, գահ» անվանմանը կցված kuk, kug, ku_3, qu_5 բառերին վերագրվում է «մաքուր, հստակ, սուրբ, անաղարտ» իմաստ, որոնք էլ ներկայացնում են բլրի սրբազան կարգավիճակը։ Այս սեպագիր բառերի հայերեն զուգահեռներն են կոկ=«զարդարած, գեղեցիկ, ընտիր, մաքուր, ողորկ» և քաւ=«մաքրագործում, սրբացում» բառերը։

Այս բնութագրով բլրի անվան համար ունենք նաև հետևյալ վկայությունը.

du_6-kuk ZU.AB

որտեղ ZU.AB=ծով (աքքադերեն apsû) բառը ներկայացրել է Ստորերկրյա աշխարհի քաղցրահամ ջրերի ծովը՝ Ծիրանի կամ Արուն Ծովը, որի տիրակալը $^{d}E_2$.A=Հայ Աստվածն էր։ Այս սրբազան բլրի/լեռան վրա էր Աստծո կացարանը։

Շումերի հնագույն քաղաքը համարվող Էրիդուն Հայ Աստծո պաշտամունքի կենտրոնն էր և նրա տաճարը ևս բնութագրվում էր որպես Սրբազան Բլուր (Du_6-kuk)։ Բաբելական դյուցազնավեպում Հայ Աստծո ավագ որդի, աստվածների արքա Մարդուկ = Մարութուկ = Արմենակ Աստծո 50 անունների շարքում հիշատակվում է

DUMU Du_3-kuk =«Սրբազան Բլրի որդի, զարմ»

անվանաձևը։ Այլ կերպ ասած, որպես նախասկզբնական Երկիր, Սրբազան Բլուրը նույնացվել է Հայ Աստծո, իմա՝ Հայքի հետ։

Շումերների աշխարհընկալման մեջ և նրանց մշակույթում սրբազան բլրի/լեռան նշանակության պատկերն ամբողջացնելու նպատակով թվարկենք նրա ևս մի քանի կարևոր բնութագրեր.

- Շումերի յուրաքանչյուր քաղաք հանդիսանում էր մի որոշակի Աստծո պաշտամունքի կենտրոն։ Ամեն քաղաք ուներ իր Սրբազան Բլուրը, որ վրա կառուցվում էր տվյալ քաղաքում պաշտվող Աստծո սրբավայրը։
- Շումերական Նիպպուր քաղաքի Սրբազան Բլուրը համարվել է Էնլիլ Աստծո նախնիների բնակավայր։ Նիպպուրը Էնլիլի պաշտամունքի կենտրոնն էր։
- Շումերական օրացույցի 7-րդ ամիսը (Հայոց տոմարի Մեհեկին) կոչվում էր $^{ITI}Du_6$-kuk = Սրբազան Բլրի ամիս։
- Ամեն ամսվա 27-րդ և 28-րդ օրերին (Հայոց օրացույցի Վահագն և Սէին օրեր) նշվում էր Սրբազան Բլրի տոնը։
- Սրբազան Բլրին մատուցվող զոհաբերությունները (կենդանիներ, հացահատիկ, կաթ) քանակապես գերազանցում էին մյուս աստվածներին մատոցվող զոհաբերություններին։

- Սրբազան բլուրն այն վայրն էր, որտեղ կարելի էր հաղորդակցվել Ստորերկրյա աշխարհի աստվածների հետ: Այսինքն, Սրբազան Բլրի վրա էին Երկիրն ու Ստորերկրյա աշխարհն իրար կապող դարպասները:

- Սրբազան Բլրի վրա են ստեղծվել հացահատիկը և ընտանի կենդանիները:

- Սրբազան Բլուրը տիեզերական լեռան (KUR=Armanu) այն բարձրունքը, գագաթն է, որի վրա ապրում են աստվածները և այնտեղից է ծագել շումերական քաղաքակրթությունը:

- Արևի Աստվածը Սրբազան Բլրից է բարձրանում Երկինք, Սրբազան Բլրի վրա է որոշում ճակատագրերը: Այս փաստն էլ Սրբազան Բլուրը նույնացնում է արևածագի երկգագաթ լեռան հետ:

Այս շարքը դեռ կարելի է շարունակել, բայց եղած բավարար է, որպեսզի հանգենք այն եզրակացության, որ շումերների աշխարհընկալման մեջ Սրբազան Բլուրը ներկայացվել է որպես մի համատիեզերական արարչական Արգանդ, որից ծնվել են աստվածներն ու ամեն ինչ: Այն եղել է աշխարհի պորտը և պորտալարի միջոցով աշխարհին տվել է օրենքներ, գիտելիքներ, սնունդ և այլն:

Շումերական մշակույթում դժվար է պատկերացնել սրբազանության ավելի բարձր կարգավիճակ, քան այն, ինչ կրել է Սրբազան Բլուրը: Սրբազանության այդ կարգավիճակով հանդերձ, Սրբազան Բլրի մասին պատկերացումները տարածվել են աշխարհով մեկ: Դրանցից հակիրճ անդրադառնանք հին Եգիպտոսից մեզ հասած տվյալներին:

Եգիպտոս – Շումերական ճառագայթող, մաքուր, սուրբ Du_6=Դու բլուրը/լեռը, որպես արևածագի լեռ և նախսկզբնական սրբազան Երկիր, հին Եգիպտոսի մշակույթում ներկայացվել է երկգագաթ լեռան սխեմատիկ պատկերով ( ): Այս հիերոգլիֆի համար նա վերծանվել է du=դու=«բլուր, լեռ» ընթերցում: Երկգագաթ լեռ պատկերող նշանագրի հնագույն նմուշները հայտնի են Սյունիքի ժայռապատկերներից, որտեղից նշանագիրը հետագայում տարածվել է ողջ աշխարհով մեկ, հասնելով մինչև Ամերիկյան մայրցամաք:

Եգիպտական =**du**=«բլուր, լեռ» հիերոգլիֆի և Արևի սկավառակի ( ) կցագրությամբ ստեղծվել է  =«արևածագ, արևի լույս, հորիզոն» հիերոգլիֆը:

Եգիպտական «արևածագ» հիերոգլիֆի մի քանի նմուշներ:

Վերջապես, բլրի կիսաշրջանաձև պատկերի ու լուսէ պսակի կամ լույսի ճառագայթների կցագրությամբ ստեղծվել է , , , , = **ha** =«արևածագի բլուր, լեռ» հիերոգլիֆը: Վերը տեսանք, որ Միջագետքում Սրբազան Բլուրը նույնացվել է Հայ Աստծո (=Հայքի) հետ: Այս առումով հետաքրքիր է այն փաստը, որ եգիպտական այս նշանագրի համար ևս վերծանվել է **ha** ընթերցում:

Դիցաբանական բնույթի եգիպտական տեքստերում արևածագի լեռան (=**du**=«բլուր, լեռ» հիերոգլիֆի) երկու գագաթները հիշատակվում են Bḥ և Manu անուններով: Արևածագի լեռան եգիպտերեն Bḥ անվանումը հայերեն է և ներկայացնում է հայերեն **բուխ**=«դուրս գալ, ծագել» արմատը: Bḥ երկիր/լեռ = Բուխ երկիր/լեռ անվանումը տառացի նշանակել է «բխման, դուրս գալու, ծագելու երկիր/լեռ»: Ինչ վերաբերում է արևամուտի լեռան Manu անվանմանը, ապա այն կազմված է բնիկ հայերեն ման=«պտույտ, շրջան, ոլորք, գալար» բառով, որից ունենք մանել=«արևի շուռ գալը՝ հեռանալը, մայր մտնելը»: Այսպիսով տեսնում ենք, որ ինչպես շումերերենում, այնպես էլ եգիպտերենում, Սրբազան Բլրի անվանումներն ու բնութագրերը հայերեն են:

Իմի բերելով Du=Դու Սրբազան Բլրի վերաբերյալ շումերական և եգիպտական տվյալները, տեսնում ենք, որ նրա մակդիրների շարքում առանցքային են նաև արևածագի լեռ, շողշողուն, բոցավառ, լույս ճառագող և նման բնութագրերը: Սրբազան բլրի այս բնութագրերն են ցուցադրում նաև շումերական ու եգիպտական նշանագրերի գծապատկերները:

3. Հայքի անվանման KUR գաղափարագիրը

Աչքի առաջ ունենալով վերը բերված փաստերը, վերադառնանք Սրբազան Բլրի ենթադրյալ *Կառդու= «բոցավառ բլուր» անվանը: Հայերեն կազմություն հանդիսացող այս անվանաձևի արտահայտած իմաստը համապատասխանում է շումերական և եգիպտական աղբյուրների հաղորդած տվյալներին: Եթե սրան էլ հավելենք, որ

*Կառդու անվանաձևը վկայված է Շումերի վաղ դինաստիական ժամանակների (մ.թ.ա. ~3000թ) սեպագիր աղբյուրներում, ապա ակնհայտ է, որ Բերոսի և նրան հետևող հեղինակների հիշատակած Կորդվաց լեռներ, Կորդուենա անունը գալիս է սեպագիր աղբյուրներից, կապ չունի Կորդուք երկրանվան հետ, սակայն վերջինիս հետ նմանությունը որոշակի դեր է խաղացել նրա տեղայնացման հարցում:

Խոսքը վերաբերում է 𒆳𒇯 = KUR.DU$_6$ գրությանը: Սրբազան բլրի Du$_6$=Դու անվանը կցված KUR սեպանշանի հիմնական իմաստներն են. «երկիր» (աքքադերեն *mātu*), «լեռ» (աքքադերեն *šadû*), Ստորերկրյա աշխարհ (աքքադերեն *erṣetu*) և «բռնկվել, վառվել, լույս տալ, ծագել» (աքքադերեն *napāhu*): Մեր խնդրի շրջանակում KUR սեպանշանի 30-ից ավել ընթերցումներից կանդրադառնանք միայն երեքին. KUR, ŠADU և RAMAN/RAMANU:

KUR – Սեպանշանի kur ընթերցումը «բռնկվել, վառվել, լույս տալ» իմաստի դեպքում նույնանում է հայերեն «կառ» նույնիմաստ բառի հետ (սեպագրական u-ն կարող ենք ընթերցել ա, ու, ո): Նույն իմաստի համար սեպագրության մեջ հաճախ օգտագործվել է նաև GAN$_2$@t սեպանշանի kar$_2$=կառ ընթերցումը, որը հաճախ գործածվել է կրկնական kar$_2$-kar$_2$=կառկառ ձևով: Ստորև բերված են kur=կառ=«բռնկվել, վառվել, լույս տալ» բառի գործածության վիճակագրությունն ըստ տարիների (մ.թ.ա.), որը կազմվել է Փենսիլվանիայի համալսարանում:

kur [BURN] (ED IIIb, Old Akkadian, Ur III) wr. kur "to burn, light up" Akk. *napāhu*

[1]	𒆳	kur
+	-ra (6x/35%); -0 (6x/35%); -re$_2$ (4x/24%); -ru (1x/6%).	

	3500	3000	2500	2000	1500	1000	(no date)
[1]		5	10				

Հետևաբար KUR.DU$_6$ գրությունը կարող ենք ներկայացնել հետևյալ կերպ.

KUR.DU$_6$ = kur-du$_6$ = kurdu = Կառդու=«բոցավառվող բլուր/լեռ»,

որը ճշգրիտ նույնական է տապանի լեռան *Կառդու անվան հետ:

Վերի իմաստներին համապատասխան, KUR սեպանշանն ունի նաև «հուր» ընթերցում. KUR = KU-UR = hu$_x$-ur = hur = հուր =«կրակ, բոց, լույս»:

ŠADU - KUR սեպանշանի ŠA-DU=ŠADU ընթերցումը տարբեր է աքքադերեն šadû=«լեռ» բառից, ունի շատ տարընթերցումներ ու իմաստներ: Այժմ տեսնենք, թե ինչ

տարընթերցումների հնարավորություն է տալիս KUR սեպանշանի այս վանկագիր ընթերցումը: Դրա համար նախ պիտի պարզենք, թե ինչ ընթերցումներ ենք վերցնելու ŠA և DU սեպանշանների համար: Այդ սեպանշանների համար այսօր հայտնի են հետևյալ ընթերցումները.

ŠA - ara, en$_{8}$, le$_{5}$/li$_{5}$, na$_{5}$, sa$_{19}$, ša, zur$_{8}$ - 7 ընթերցում:

DU - ar$_{6}$, ara$_{6}$, aragub, de$_{6}$, di$_{6}$, du, dul$_{x}$, er$_{10}$, ge$_{13}$, gen, ĝen, gim$_{6}$, ĝim$_{6}$, gin, gina$_{x}$, gir$_{7}$, gub, gubu, guba, gup, im$_{6}$, kaš$_{5}$, kim$_{6}$, kin$_{7}$, ku$_{x}$, kub, kup, kur$_{x}$, lah$_{6}$, men$_{3}$, mi$_{x}$, na$_{x}$, qub, qup, ra$_{2}$, re$_{6}$, ri$_{6}$, ša$_{4}$, še$_{13}$, tu$_{3}$, tum$_{2}$, tumu$_{2}$, tuma$_{2}$, țu$_{3}$ - 44 ընթերցում:

Սեպագիր բառարաններում ŠA սեպանշանի համար վկայված A-RA գրությունը կարող ենք ընթերցել ar կամ ara: Սրանով գրառվել է ^{d}E$_{2}$.A = Հայ Աստծո հանձնակատարի ^{d}Ar կամ ^{d}Ara անունը, ով պատկերվել է երկդեմ աստվածության տեսքով.[3] ^{d}ARA = *uš-mu-u$_{2}$*, $^{d\ a-ra}$ŠA = *us-mu-u*:

Այս Ար կամ Արա դիցանունը ծագում է բնիկ հայերեն ար=«անել, կատարել» արմատից և արտահայտում է հանձնակատար աստվածության գործառույթը:

Ընթերցման հաջորդ տարբերակի համար վերցնենք ŠA = le$_{5}$, li$_{5}$ և DU = ar$_{6}$, er$_{10}$ ընթերցումները.

ŠA-DU = le$_{5}$-ar$_{6}$ = li$_{5}$-ar$_{6}$ = lear, liar = լեառ(ն)

= le$_{5}$-er$_{10}$ = ler = լեռ

= sa$_{19}$-ar$_{6}$ = sar = սար =«լեռ»

Սրանք էլ ներկայացնում են բնիկ հայերեն «լեռ, լեառն» բառը և սար =«լեռ» հոմանիշը: Իսկ KUR սեպանշանի KU-UR վանկագիր գրությունից էլ ստանում ենք «լեռ» իմաստը կրող երրորդ հոմանիշը.

KU-UR = bul$_{x}$-ur = bulur = *բուլուր>բլուր =«փոքր լեռ»,

որտեղ bul$_{x}$ վանկը KU սեպանշանի ընթերցումն է:

---

[3] . Դիցանվան uš-mu-u$_{2}$, us-mu-u մեկնաբանությունը համարվում է աքքադերեն բառ, ներկայացվում է usmû ձևով և մեկնաբանվում է «ինչ որ երկդեմ անձ» : Իրականում այն բնիկ հայերեն ուս=«սովորել» և ուշ=«միտք, խելք» արմատից կազմված ուսումով, ուշումով=«սովորած, իմացող, խելքով» բառն է: Քանի որ UŠ սեպանշանն ունի us$_{2}$, usu$_{2}$ ընթերցումներ, ապա uš-mu-u$_{2}$ =usu$_{2}$-mu-u$_{2}$ = ուսումով: ZU, SU, UŠ սեպանշանների (որոնք ներկայացնում են հայերեն «ուս», «ուշ» արմատները) միջոցով է գրառվել «իմանալ, սովորել, գիտենալ» իմաստը կրող աքքադերեն *edû, idû* բառը: Վերջինս բազմաթիվ զուգահեռներ ունի հնդեվրոպական լեզուներում: Այս պարագայում անհիմն է հայերեն «ուշ» արմատը միջին պարսկերենից փոխառություն դնելը:

Ի վերջո տեսնում ենք, որ ŠA-DU ընթերցումն արտահայտում է KUR սեպանշանի հիմնական իմաստները և այդ իմաստներն արտահայտող ընթերցումները բնիկ հայերեն բառեր են:

RAMAN և RAMANU - KUR սեպանշանի այս ընթերցումները նույնական են Հայաստանի Arman, Arman(n)u սեպագիր անվանման հետ: Հայաստանի այս անվանման հնագույն գրավոր վկայությունը վերաբերում է Ք.ա. III հազ. երկրորդ կեսին և առկա է Աքքադի առաջին թագավորների (Սարգոն Աքքադացու (Ք.ա. XXIII÷XXIIդդ) և նրա թոռ Նարամ Սուենի (Ք.ա. XXIIդ) դեպի Հայաստան կատարած արշավանքների տարեգրություններում:

Որպես այս նույնացման հիմնավորում, բերենք բազմաթիվ օրինակներից միայն մեկը, որը վերաբերում է ծիրանի սեպագիր անվանումներին: Ծիրանը Հայաստանի էնդեմիկ բույս է, Հայաստանում է դարձվել մշակովի և հետագայում տարածվել:

Բուն «ծիրան» բառը գաղափարագրվել է IR սեպանշանի միջոցով, որի դիմաց սեպագիր բառարաններում բերվում է աքքադերեն armannu =«հայկական» ձևը.

IR = ar-man-nu

Ծիրանի մյուս անվանումների համար ունենք հետևյալ վկայությունները.

^{GIŠ}hašhur kur-ra = ar$_2$-man-nu

^{GIŠ}hašhur ar-man-nu = ar$_2$-man-nu

Այս գրությունների ձախ կողմում ծիրանի շումերերեն համարվող անվանումներն են, իսկ աջ կողմում՝ աքքադերեն: Եթե առաջին տողի kur բառի համար վերցնենք «լեռ» իմաստը, ապա ծիրանի ^{GIŠ}hašhur kur-ra անվանումը տառացի կնշանակի «լեռնային խնձոր»: Սակայն ծիրանի բնությանը շատ թե քիչ ծանոթ ամեն ոք գիտի, որ Հայաստանի բնակլիմայական պայմաններում վաղ գարնանը ծաղկող ծիրանենին աճում է ցածրադիր դաշտավայրերում և նախալեռնային շրջաններում: Վայրի ծիրանենին աճում է 800-1250մ բարձրությունների վրա: Հետևաբար ծիրանը բառի բուն իմաստով չի կարող կոչվել լեռնային (կարելի է ցածրադիր Միջագետքի համեմատ 800-1250մ բարձրությունները համարել լեռնային, սակայն դա հարցի սկզբունքային լուծում չէ): Այս պարագայում մնում է կարծել, որ kur-ra-ն ոչ թե «լեռ, լեռնային» իմաստ է կրում, այլ այն երկրի, տարածքի անվանումն է, որտեղ աճում է ծիրանը:

Երկու օրինակների աջ կողմում գրված է armannu, իմա՝ armannu=«հայկական» կամ «Հայաստանի»: Ծիրանի այս անվանումը Միջագետքում պահպանվեց հազարամյակներ շարունակ, հասավ արաբներին, ովքեր ծիրանն անվանում են թուֆահ ալ արմանի=«հայկական խնձոր»:

Վերջապես, երկրորդ տողում ծիրանը բառարանի երկու կողմում էլ բնութագրվում է armannu անվանումով: Այս օրինակը մեզ ցույց է տալիս, որ KUR-ը և Ar(2)-man-nu-ն նույն երկրի տարբեր անվանումներն են (KUR-RA գրության մեջ RA սեպանշանը սեռական հոլովի ցուցիչն է): Այս երկու անվանումների համարժեքության մասին է վկայում այն փաստը, որ ծիրանի armannu անվան գրության ձևերի (armannu, armānu, arwānu, armanū, armani) շարքին են պատկանում նաև ramannū, ramani ձևերը: Բերված փաստերի լույսի ներքո դրանք արդեն վստահաբար կարող ենք նույնացնել Armani, Armanu երկրանվան նախաձայն a-ի անկումով տարբերակների հետ: Արդյունքում Armanu և KUR երկրների նույնացման կրկնակի հիմնավորում ենք ստանում:

Մեր այս եզրակացությունը, թե KUR սեպանշանի ramanu, raman ընթերցումները ներկայացնում են Arman/Armen/Armin ցեղանուն/երկրանունը, իր հավելյալ հիմնավորումն ունի ի դեմս ŠA-DU=ŠADU գրության մի այլ տարընթերցման: Բան այն է, որ ŠA-DU գրության այդ տարընթերցումը տալիս է հենց Armen=Արմեն ձևը.

ŠA-DU = ara-men$_3$ = ar$_x$-men$_3$ = Aramen, Armen = Արամեն, Արմեն:

Այսպիսով, բոլոր հիմքերն ունենք պնդելու, որ KUR սեպանշանի ŠADU, ramanu, raman ընթերցումների ճշգրտված ձևերին են պատկանում նաև arman, armen, armin ընթերցումները, որոնք սեպագրության մեջ գործածվել են որպես անձնանուն, դիցանուն, ցեղանուն և երկրանուն: Ուստի եթե վերադառնանք Սրբազան Բլրի անվան KUR.DU$_6$ գրությանը, ապա նրա KUR բնութագրին կարող ենք այլ ընթերցում և այլ մեկնաբանություն տալ:

Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի գրագիրը KUR բառը մեկնաբանել է Սրբազան Բլրի Du$_6$ անվան միջոցով, այսինքն՝ KUR-ը և Du$_6$-ը ներկայացրել է որպես նույն տարածքի հոմանիշ անվանումներ: Այդ իսկ պատճառով սեպագրագետներն այն տառադարձում

են = KUR:DU$_6$, ինչը հարկ է ընթեցել այսպես. KUR-ը DU$_6$-ն է = Armanu-ն Du$_6$-ն է = Հայաստանը Սրբազան Բլուրն է:

Ինչի՞ հանգեցինք:

Հանգեցինք նրան, որ KUR=Լեռ-ը, որպես տիեզերական Լեռ, Երկնքի նեցուկ և նախասկզբնական սրբազան Երկիր, Du$_6$=Դու-ն, որպես Սրբազան Բլուր, աստվածների բնակավայր, արարչության վայր և Armanu-ն, որպես Armenia=Հայաստանի սեպագիր անվանում, նույն տարածքի տարբեր անվանումներն են:

Ջրհեղեղի մասին պատմություններում շումերականից մինչև Հին կտակարան ու Ղուրան, տապանի հանգրվանի վայրը (լեռ, երկիր) ներկայացվում է զուտ որպես աշխարհագրական անվանում և չեն տրվում նրա առասպելական, ավանդական բնութագրերը: Ուշ աղբյուրներում (Բերոս, Ծննդոց, Հոբելյանների գիրք, Ղուրան) այդ բնութագրերը չեն տրվել, քանզի հավանաբար դրանք հիմնականում մոռացված էին, կամ էլ՝ չեն տրվել միտումնաբար:

Ի տարբերություն սրանց, մ.թ.ա. 3÷1 հազարամյակների սեպագիր աղբյուրները բազմաթիվ բնութագրեր են հաղորդում տիեզերական KUR լեռան/երկրի, DU$_6$ Սրբազան Բլրի, Armanu=Հայաստան երկրի և սրանց նույնության մասին: Որպես վերը կատարած մեր եզրակացության հիմնավորում, բերենք դրանցից մի քանիսը:

4. Սրբազան Բլուրը Արևածագի լեռ և ջրերի ակունք

Շումերական ժամանակների պատկերացումները ներկայացնող, բայց սարգոնյան ժամանակներից մեզ հասած մի աղոթքում (Երրորդ Տան Աղոթք) ասվում է, թե

«Աստված Արևի, երբ դու հայտնվում ես Մեծ Լեռից (KUR-GAL),
Ստորերկրյա ջրերի Լեռից (KUR-IDIM),
Երբ դու հայտնվում ես Սրբազան Բլրից (Du$_6$-kuk),
Որտեղ ճակատագրերն են որոշվում,
Երբ դու հայտնվում ես այնտեղից՝ Երկնքի հիմքից,
Որտեղ հանդիպում են Երկինքն ու Երկիրը»:

Աղոթքի այս հատվածում նույնացվում են KUR-GAL=Մեծ Լեռը, KUR-IDIM =ստորերկրյա քազցրահամ ջրերը (աղբյուրները) բխեցնող Լեռը և Du$_6$-kuk =Դու Կոկ =

Սրբազան Բլուրը, որպես Արևածագի Լեռ, երկրային ջրերի ակունք և Երկնքի հիմք ու հենարան:

Նախ անդրադառնանք Սրբազան Բլրի KUR-IDIM բնութագրին: Այստեղ IDIM սեպանշանով գաղափարագրվել է ստորերկրյա քաղցրահամ ջրերի անվանումը (աքքադերեն *nagbu*), որոնց ավազանը Հայոց բանահյուսությունից հայտնի է Ծիրանի Ծով կամ Արուն Ծով անունով:

Այս նույն սեպանշանով գրառվել է նաև ^{d}EN.KI=^{d}E$_{2}$.A=Հայ Աստծո անուններից մեկը. $^{d\ NA\text{-}AG\text{-}BU}$IDIM = ^{d}E$_{2}$.A: Այստեղ NA-AG-BU կամ NA-AG-BE գրությունն է, որ հարկ է վերցնել որպես IDIM սեպանշանի ընթերցում և դիցանուն: Հենց սա է անցել աքքադերենին որպես *nagbu* =«ստորերկրյա քաղցրահամ ջրեր, աղբյուր»: Իրականում, դիցանվան NA-AG մասը ներկայացնում է բնիկ հայերեն «նուազ» բառը, որը մատենագրության մեջ վկայված է «հեղուկ, խմելիք, ջուր, գինի» և «գավաթ, բաժակ» իմաստներով. NA-AG = nu$_{8}$-ag = nuag = նուազ:[4]

Ինչ վերաբերում է դիցանվան BU բաղադրիչին, ապա այն ունի «հանել, դուրս բերել, բխեցնել» իմաստ (աքքադերեն *nasāhu*) և սեպանշանի bu ընթերցումը ներկայացնում է բնիկ հայերեն «բուխ, բուղխ» նույնիմաստ բառը: Նույն իմաստներն են վերականգնվել նաև BU սեպանշանի giṭ$_{2}$, gid$_{2}$, gida$_{2}$, gidi$_{3}$, git$_{2}$, kid$_{10}$, kit$_{10}$ ընթերցումների համար (աքքադերեն *šadādu* =«ձգել, քաշել, դուրս քաշել, դուրս հանել»), որոնք էլ ներկայացնում են բնիկ հայերեն «կիթ, կութ» բառը:

Հետևաբար, Հայ Աստծո այս անվանաձևի համար մի դեպքում կունենանք ^{d}Nuag-bu =Աստված Նուազաբուխ=«ջուր, խմելիք բխեցնող աստված» ընթերցում, իսկ մյուս դեպքում՝ ^{d}Nuag-kit$_{10}$=Աստված Նուազակիթ=«ջուր, խմելիք կթող աստված» ընթերցում:

Հայ Աստծո անունը գրառվել է նաև IDIM սեպանշանի HA-NI-IŠ ընթերցման միջոցով՝ ^{d}HA-NI-IŠ:

Հետազոտողների կողմից իրավացիորեն կարծիք է հայտնվել, որ ^{d}HA-NI-IŠ գրության HA-NI բաղադրիչն է ներկայացնում ^{d}E$_{2}$.A=Հայ Աստծո բուն անունը: Հայ = ^{d}Hai դիցանվան սեպագիր գրությունը սկզբում ընթերցվում էր ^{d}HA.NI=^{d}Ha-ni=^{d}Hani: Հետագայում հայտնաբերվեց դիցանվան ^{d}HA.A.A գրելաձևը, ինչը սեպագրագետներին ստիպեց գալ այն համոզման, որ տարածված ^{d}HA.NI գրության մեջ NI սեպանշանի ni ընթերցման փոխարեն հարկ է վերցնել նրա ia$_{3}$ ընթերցումը և դիցանունն ընթերցել ^{d}HA.NI

[4] . Հիմնովին անտեսելի է Հ. Աճառյանի այն տեսակետը, թե իբր հայերեն «նուազ» բառը փոխառություն է «պահլավերեն գավառական մի ձևից, որ ավանդված չէ»:

= ^{d}Ha-ia$_3$ = ^{d}Haia: Քանի որ NI սեպանշանն ունի նաև i$_3$ ընթերցում, ապա դիցանունը կարող ենք ներկայացնել նաև ^{d}HA.NI = ^{d}Ha-i$_3$ = ^{d}Hai = Աստված Հայ ձևով:

Հայերենի տվյալների ներգրավումը ցույց է տալիս, որ երեք գրելաձևերն էլ ճիշտ են, մեկնաբանվում են միայն հայերենի դաշտում և ներկայացնում են նույն Աստծուն.

1. ^{d}HA.NI = ^{d}Ha-ni = ^{d}Hani = Աստված Հանի=«աստված նախնի»
2. ^{d}HA.NI = ^{d}Ha-ia$_3$/i$_3$= ^{d}Haia/ ^{d}Hai = Աստված Հայ=«հայոց արարիչ աստվածը»
3. ^{d}HA.A.A = ^{d}HA A.A = ^{d}Ha(i) A.A= Հայր Աստված Հայ

Դիցանվան գրառման այս երրորդ ձևը իմաստային առումով առաջինի մի այլ տարբերակն է և հանի=«նախնի» բառը փոխարինված է A.A=«հայր» բառով (աքքադ. *abu*):

Հայ Աստծուն իր նախնի կարող է կոչել միայն նրա անունը կրող ազգը՝ Հայ ազգը: Մեր նախնիներն իրենց Արարիչ Աստծո Հայ անունով վերցրել են Հայք=«հայեր» ընդհանրական ինքնանվանում, իսկ իրենց բնօրրանը՝ կոչել են Հայք=«հայերի երկիր» կամ «Հայ Աստծո երկիր»:

Այժմ վերադառնանք Սրբազան Բլրի KUR-IDIM անվանը: Այն կարող ենք ներկայացնել ^{KUR}IDIM ձևով, որտեղ KUR սեպանշանը «երկիր» կամ «լեռ» նշանակող ցուցիչ է, և ընթերցել «IDIM երկիր» կամ «IDIM լեռ»: Իսկ հաշվի առնելով IDIM սեպանշանի NA-AG-BU=նուագաբուխ ընթերցումը, կունենանք.

^{KUR}IDIM = Նուագաբուխ երկիր =«ջուր բխեցնող երկիր»,

= Նուագաբուխ լեռ =«ջուր բխեցնող լեռ»:

Այսպիսով, Սրբազան Բլուրն իր ^{KUR}IDIM անվամբ ներկայանում է որպես ընդերքի քաղցրահամ ջրերը բխեցնող երկիր/լեռ:

IDIM սեպանշանի HA-NI-IŠ ընթերցումն ավելի է հստակեցնում, թե ^{KUR}IDIM գրության վերի ընթերցումներն իրական աշխարհագրության որ տարածքին է վերաբերում: Վերը տեսանք, որ HA-NI բաղադրիչի ընթերցումն է hai=հայ, որով գրառվել է Հայ Աստծո անունը: Բնականաբար, եթե «աստված» ցուցիչի փոխարեն ունենք «երկիր/լեռ» իմաստի ցուցիչ (KUR), ապա HA-NI=Hai=Հայ ընթերցումը դառնում է երկրանուն կամ լեռնանուն: Սեպագրության մեջ բառավերջի բաղաձայնն արտահայտելու համար սովորաբար օգտագործվում է երկհնչյուն վանկ (բաղաձայն+ձայնավոր կամ ձայնավոր+բաղաձայն): HA-NI-IŠ գրության մեջ այդ դերն է կատարում –IŠ սեպանշանը, որի iš, is$_2$, isi, es$_5$ ընթերցումների միջոցով արտահայտվել է s=ս հնչյունը:

Հետևաբար, HA-NI-IŠ=Hais=Հայս, որը Հայք=«հայեր» կամ Հայք=«հայերերի երկիր» անվանման հոգնակի սեռական ձևն է:

Ուստի Սրբազան Բլրի ^{KUR}IDIM անվանման համար այժմ կունենանք հետևյալ ընթերցումները.

^{KUR}IDIM= ^{KUR}HA-NI-IŠ =^{KUR}Hais= Երկիր Հայս =«հայոց երկիր»,

= Լեռ Հայս =«հայոց լեռը»,

իսկ դիցանվան պարագայում կունենանք.

^{d}IDIM= ^{d}HA-NI-IŠ =^{d}Hais= Աստված Հայս =«հայոց աստվածը»:

Armanu երկրի դեմ արշաված Աքքադի թագավոր Նարամ Սինի (մ.թ.ա. 23-րդ դար) կոթողը: Կոթողի ստորին մասում ցույց է տրված իրարից բարձր երեք լեռնաշղթաների ալիքաձև պատկերները: Դրանց վրա վեր է խոյանում անհասանելի KUR=Armanu=Հայքը, որպես տիեզերական լեռ, որի գագաթի շուրջը պտտվում են երկնային լուսատուները:

Արդյունքում տեսնում ենք, որ KUR-IDIM բնութագիրը Սրբազան Բլուրը նույնացնում է Հայքի հետ և ներկայացնում որպես Արևի և ընդերքի քաղցրահամ ջրերի բխման լեռ/երկիր: Այսինքն, Հայքը պատկերացվել է որպես Հրի (Արև, հրաբուխ) և Ջրի բխման երկիր:

Հայոց բնօրրանը Միջերկրական, Սև և Կասպից ծովերի միջև ընկած լեռնակղզին է (միջին բարձրությունը ~2000մ), որն աշխարհագրական և երկրաբանական գրականության մեջ հայտնի է Հայկական բարձրավանդակ կամ Հայկական լեռնաշխարհ անունով: Սա Մեծ, Փոքր Հայքերն ու Կիլիկիան ընդգրկող պատմական Հայաստանն է: Հայկական լեռնաշխարհից են սկիզբ առնում Առաջավոր Ասիայի բոլոր խոշոր գետերը. Եփրատ, Տիգրիս, Կուր, Արաքս, Ճորոխ, Հալիս:

Սկսած վերին հին քարի դարի ժամանակներից մինչև ջրհեղեղի պատմության ու Հին կտակարանի գրառման ժամանակները, Հայքը պատկերացվել է որպես մի ամբողջական լեռ, որից ծագում են Արևն ու մյուս երկնային լուսատուները (Արեվելքի

երկիր), որից բխում են ընդերքի քաղցրահամ կենսատու ջրերն ու հոսում դեպի աշխարհի չորս կողմերը:

Անշուշտ իրենց հայրենիքին վերաբերող այս պատկերացումն առաջինը պիտի ձևավորեին Հայքի բնիկները, ովքեր իրենց լեռնաշխարհից բխող գետերի հուներով իջնելով ու հասնելով շրջակա ցածրադիր վայրերին ու ծովերին, պիտի ամբողջացնեին իրենց տեսածը: Իսկ դրան էլ անմիջապես ու տրամաբանորեն պիտի հետևեր այն միտքը, որ Հայքում են Երկնքի ու Ստորերկրյա աշխարհի դարպասները, որոնցից բխում են լուսատուներն ու ջրերը:

Շումերական մի այլ աղբյուր էլ հաղորդում է, թե ^{d}E$_2$.A=Հայ Աստվածը Տիգրիս և Եփրատ գետերի ջրերը բխեցնում է ^{KUR}KUR-RA=Armanu=Հայք երկրից.

^{ID_2}IDIGNA ^{ID_2}BURANUN ZAG-GA BA-ANA$_2$-LA$_2$ A ^{KUR}KUR-RA MI-IA$_3$-IN TUM$_3$-GEŠ$_3$
Տիգրիսի, Եփրատի ծագը բանալ ջուրը ^{KUR}Armanu-ից միայն տամկեց «Տիգրիսի և Եփրատի ակունքը բացեց, ջրերը Հայքից միայն հոսեցրեց»:

Այս հատվածից էլ տեսնում ենք, որ ^{KUR}KUR= ^{KUR}Armanu երկիրը նույնանում է աշխարհի ջրերը բխեցնող ^{KUR}IDIM= ^{KUR}Hais երկրի հետ և վերստին հաստատում, որ սրանք Հայքի սեպագիր անուններն են, քանզի Տիգրիսի և Եփրատի ակունքները Հայքում են:

Հայքի մասին հազարավոր տարիների պատմություն ունեցող այս պատկերացումը սխեմատիկ ներկայացված է հաջորդ նկարում: Այստեղ ձախ զագաթը ներկայացնում է Արևմտյան Հայաստանը, իսկ աջը՝ Արևելյան Հայաստանը, որոնք բաժանված են Արաքսի միջին հոսանքն ընդգրկող Նախիջևանի, Արարատյան և Շիրակի դաշտերով: Հայաստանի մասին հիշյալ պատկերացումների ձևավորման ժամանակ այդ դաշտավայրերի տեղում քաղցրահամ ջրերի մեծ լճեր էին, որոնց երկրաբանները տվել են Արարատյան ծով և Շիրակի ծով անվանումներ:



Հայքը տիեզերական լեռ, որից բխում են Առաջավոր Ասիայի բոլոր խոշոր գետերը: Նրա հիմքը Ծիրանի Ծովում է, իսկ գագաթը՝ Երկնքում:

Նշված են նաև քրիստոնեական աշխարհի համար սրբազան Մասիս (=Արարատ) և իսլամական աշխարհի համար սրբազան Ջուդի լեռները, որպես տապանի հանգրվանի ենթադրյալ լեռներ:

Արարատյան ծովի ջրերը սկսել են ցամաքել մ.թ.ա. 9÷8-րդ հազ., որից հետո էլ սկսվել է Արարատյան ու Նախիջևանի դաշտավայրերի բնակեցումը: Ըստ ժամանակակից հնագիտական տվյալների, Արարատյան դաշտավայրի հնագույն բնակավայրերը հիմնվել են մ.թ.ա. 8÷7-րդ հազարամյակներում:

Այժմ դառնանք Սրբազան Բլրի KUR-GAL բնութագրին: Այստեղ gal=գաղ=«մեծ, խոշոր» բառն է, իսկ վերը տեսանք, որ KUR սեպանշանով գաղափարագրվել է Հայքի Armanu=Armenia անվանումը: Հետևաբար սրբազան բլրի KUR-GAL անվանումը կարող ենք ընթերցել ինչպես Մեծ Լեռ, այնպես էլ Արմենիք (=KUR) Գաղ (=GAL) = Մեծ Հայք: Այսինքն, Հայքի Մեծ մակդիրը շատ հին ծագում ունի:

Այսօր եթե հարց տրվի, թե ինչու է Հայքին տրվել Մեծ բնութագիր, ապա պատասխան կտրվի, թե իբր Փոքր Հայքից տարբերակելու համար: Իրականում, ինչպես ցույց են տալիս սեպագիր աղբյուրները, այն շատ հին է և ոչ թե Հայքի տարածքի մեծության արդյունք է, այլ արդյունք է Հին Աշխարհի վրա Հայոց հոգևոր-մշակութային, սոցիալ-տնտեսական և գիտական ազդեցության:

Ըստ սեպագիր աստվածացուցակների, Հայքի KUR-GAL անվանումը նաև գործածվել է որպես դիցանուն (^{d}KUR-GAL=«աստված Մեծ Հայքի»): Այն եղել է ^{d}EN.LIL$_2$ Աստծո տիտղոսներից մեկը: Սեպագիր աղբյուրները նաև հայտնում են, որ Հայքի ^{d}EN.LIL$_2$ Աստվածը Ներիգալ=Անգեղն է: Նույն աղբյուրներից նաև իմանում ենք, որ KUR=Armanu=Armenia երկիրը համարվել է ^{d}EN.LIL$_2$ Աստծո տունը կամ տաճարը (E$_2$-KUR = ^{d}EN.LIL$_2$): Վերն էլ տեսանք, որ ^{d}EN.LIL$_2$ Աստծո նախնիներն ապրել են Սրբազան Բլրի վրա: Ըստ նույն աստվածացուցակների, ^{d}KUR-GAL տիտղոսն են կրել նաև Երկնքի Աստվածը (=AN) և նրա կինը: Այս տվյալները վկայում են, որ KUR=Armanu երկիրը եղել է Արարիչ աստվածների սրբազան կացարանը:

Այստեղից էլ անցնենք մեր հաջորդ թեմային:

5. Սրբազան Բլուրը աստվածների բնակության վայր

Սեմական ցեղերը ևս ընդունել են, որ Հայքն է աստվածների բնակության վայրը: Հին կտակարանի Եզեկիելի մարգարեության մեջ խոսվում է Աստծո Սուրբ Սարի մասին: Սակայն Ծննդոց գրքում Եդեմը ներկայացվում է որպես երկու էլեմենտներից կազմված կառույց. «այգի» և «գետ»: Թեև Ծննդոց գրքի Եդեմի նկարագրության հատվածում բացակայում է բուն «լեռ» բառը, սակայն եղել է այն սկզբնաղբյուրում, որից օգտվել են Ծննդոց գրքի հեղինակները:

Ծննդոց գրքում ասվում է, թե Աստվածը Եդեմի արեվելքում պարտեզ է տնկում, որպեսզի նրանում բնակեցնի իր արարած մարդուն՝ Ադամին: Իսկ Եդեմի պարտեզը ոռոգելու համար մի գետ է բխեցնում, որը բաժանվում է չորս ճյուղի (Եւ գետ ելանէր յեդեմայ ոռոգանել զդրախտն. եւ անտի բաժանի ի չորս առաջս): Այսինքն, այստեղ ևս խոսվում է մի մայր գետի մասին, որը բաժանվում է 4 առանձին գետերի:

Հանրահայտ է, որ Ծննդոց գրքի սկզբնաղբյուրը միջագետքյան սեպագիր գրություններն են: Այս առումով մեզ հետաքրքիր տեղեկություն է հաղորդում սեպագիր աղբյուրների այն բառը, որը Ծննդոց գրքում թարգմանվել է qdm=«արեվելք» բառով:

Շումերական աղբյուրներում «արեվելք» և «լեռ» իմաստներն արտահայտվել են KUR սեպանշանի միջոցով:

^{IM}KUR = *šadû* = արեվելք

KUR = *šadû* = լեռ,

որտեղ IM սեպանշանը գործածված է որպես աշխարհի կողմերի (քամիների) ցուցիչ: Եթե շումերերենում այս ցուցիչի միջոցով հնարավոր է տարբերակել KUR սեպանշանի «արեվելք» և «լեռ» իմաստները, ապա աքքադերենում երկու իմաստներն էլ արտահայտվել են միևնույն *šadû* բառի միջոցով: Աքքադերենում ուղղակի վերցվել է KUR = ŠA-DU = *šadû* ընթերցում, որին վերագրվել է և «լեռ», և «արեվելք» իմաստներ, ինչն էլ դարձել է Ծննդոց գրքի հեղինակների համար շփոթության պատճառ: Նրանք վերցրել են *šadû* բառի «արեվելք» իմաստը և թարգմանել qdm=«արեվելք»:

Անշուշտ այս իմաստներից առաջնայինը «լեռ» իմաստն է, որով պայմանավորված է «արեվելք» իմաստը, քանզի խոսքը վերաբերում է արեվածագի երկգագաթ լեռանը:

Ծննդոց գրքի «Եւ տնկեաց Աստուած զդրախտն յԵդեմ ընդ արևելս» արտահայտության մեջ մտնող «արևելք» բառը կարող ենք փոխարինել «լեռ» բառով, ապա «Եւ տնկեաց Աստուած զդրախտն յԵդեմ ընդ լեառն» (ընդ=«առջևը, առաջակողմը», այսինքն՝ Լեռան հարավային կողմում): Այսինքն, եթե Ծննդոց գրքի համապատասխան հատվածում *šadû* = արևվելք իմաստի փոխարեն վերցնենք *šadû*=«լեռ» իմաստը, ապա կստացվի, որ Աստվածը Եդեմը՝ պարտեզը, տնկել է ոչ թե արևվելքում, այլ՝ Լեռան վրա: Այն Լեռան, որի վրա հետագայում պիտի հանգրվանի ջրհեղեղից փրկված Նոյի տապանը:

Մեր կողմից վերականգնված Եդեմի այս պատկերը տեսնում ենք մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկզբին պատկանող կավե սալիկի վրա, որը հիրավի աշխարհի հնագույն քարտեզներից մեկն է, որը ներկայացնում է նախասկզբնական Սրբազան Երկիրը (նկարը տես ստորև): Սալիկի վրա պատկերված աշխարհագրությունը կազմված է 4-ական =A=«ջուր, գետ» և =GAN2=«այգի» (=gana2/kana2=կանա) նշանագրերից, որոնց կենտրոնում պատկերված է = KUR =«լեռ, երկիր» նշանագիրը:



Թել Ֆարայից պեղված կավե սալիկի լուսանկարը և գծապատկերը (մ.թ.ա. 3-րդ հազ. սկիզբ):

Եթե շումերական կավէ սալիկի վրա պատկերվածը դիտենք աշխարհի արարման Հին Աշխարհում տարածված և Հին կտակարանի հեղինակներին հասած պատկերացումը, ապա նրանում կարող ենք տեսնել աշխարհի արարման երեք սկզբնական փուլերը:



Այս դրվագում նախաստեղծ սրբազան աշխարհը ներկայանում է որպես համաշխարհային ծովի ջրերով շրջապատված սրբազան Լեռ (KUR): Սա այն նախաստեղծ Սրբազան Երկիրն է, որը հետագայում ընդլայնվելով ընդունել է աշխարհի համար նախասահմանված չափերը: Այդ ընթացքում նախաստեղծ Սրբազան Երկիրը մնալով աշխարհի կենտրոնում, իր բնիկների՝ նախաստեղծ մարդկանց կողմից անվանվում է Հայք:

Ջրհեղեղի ժամանակ աշխարհը բերվում է այս նախնական վիճակին:



Հաջորդ արարչական ակտով Աստված տնկում է Եդեմ այգին, որպես արարվելիք մարդու բնակավայր: Կավե սալիկի վրա այգին պատկերված է չորս $gana_2/kana_2$=կանա=«խաղողի այգի» նշանագրերով: Լեռան շուրջը դրանց փոխադարձ դասավորությամբ ստեղծվել է աշխարհի 4 կողմերը նշող խաչի պատկեր, որի կենտրոնում «լեռ» նշանագիրն է: Աշխարհի 4 կողմերի (դռների) գաղափարի դրսևորում ենք համարում նաև Հայոց 4 բդեշխությունների կարգը:



Քարտեզի հաջորդ շերտը ներկայացնում են 4 «ջուր» նշանագրերը, որոնց միջոցով պատկերված են այգիները ոռոգող չորս գետերը: Չորս գետերով երիզվում է Եդեմի ուղղանկյուն պատկերը: Ուղղանկյունը Հայ Աստծո անուններից մեկը գաղափարագրող նշանագիրն է:



Վերջապես երեք էլեմենտների (լեռ, այգի, գետ) վերադրմամբ ամբողջանում է երկրային Եդեմի պատկերը: Ավարտվում են մարդու գոյության անհրաժեշտ միջավայրի ստեղծման արարչական ակտերը և հաջորդիվ՝ Հայ Աստվածը արարում է այն մարդուն, ով կրելու է իր անունը, պաշտելու է իրեն և բնակեցնում է Սրբազան Լեռան վրա՝ Հայքում:

Հին կտակարանի գրառումից ավելի քան հազար տարվա հնություն ունեցող և Ուգարիթում հայտնաբերված գրավոր աղբյուրները հաղորդում են, թե սեմական ցեղերի Էլ Արարիչ Աստվածն ապրում է լեռներում գտնվող վրանէ կացարանում: Ասվում է, թե Էլի սրբազան կացարանը գտնվում է զույգ գետերի (Տիգրիս և Եփրատ) ակունքների մոտ, խորագույն իջվածքի ավազանում՝ ծովում: Աստվածներն ու նրանց հանձնակատարներն այնտեղ են գնում Էլից իրենց հուզող հարցերի պատասխանները կամ հրահանգներ ստանալու համար:

Տիգրիսի ու Եփրատի ակունքներն ընդգրկող Հայքի ներսի խորագույն իջվածքը Արարատյան և Նախիջևանի դաշտավայրերի տարածքն է (800÷900մ), որը, ինչպես տեսանք վերը, Հայքը կիսում և նմանեցնում է երկգագաթ լեռան: Նաև տեսանք, որ

մինչև մ.թ.ա. 9÷8-րդ հազ. այդ դաշտավայրերը դեռևս ծածկված են եղել Արարատյան ծովի քաղցրահամ ջրերով:

Նախ, այս փաստերից բխում է, որ Հայքի մասին պատկերացումները, որպես աստվածների բնակության վայրի, պիտի ձևավորված լինեին վաղ նոր քարի դարից առաջ: Երկրորդ՝ տեսնում ենք, որ այդ պատկերացումները հազարավոր տարիներ կայուն պահպանվելով մ.թ.ա. 3÷2 հազ. անցել են նաև սեմական ցեղերին, ովքեր իրենց Արարիչ Աստծո կացարանը պատկերացրել են Արարատյան ծովում գտնվող կղզու վրա: Անշուշտ սա իրական աշխարհագրության մեջ Սրբազան Բլրի տեղայնացված և սրբության առավելագույն կարգավիճակ ստացած տարբերակն է:

Արարիչ Աստծո սրբազան կացարանը (Սրբազան Բլուրը) ըստ սեմական աղբյուրների հաղորդած տվյալների:

Շումերական սեպագիր աղբյուրները, բացի վերը թվարկածներից, Սրբազան Բլրի վրա բնակվողներ են անվանում նաև ^{d}A.NUN.NA=^{d}Anunnakū և ^{d}NUN.GAL=^{d}Igigi աստվածներին, ^{d}DUMU.ZI Աստծուն և այլ աստվածների: Մեր քննության հաջորդ կետում անդրադառնանք ^{d}DUMU.ZI Աստծո և Սրբազան Բլրի կապին:

6. Aratta երկիրը և ^{d}DUMU.ZI Աստծո բնակավայր Սրբազան Բլուրը

Արևածագի լեռ հանդիսացող Սրբազան Բլուրը համարվել է նաև ^{d}DUMU.ZI Աստծո բնակավայրը: Քանի որ ^{d}DUMU.ZI Աստվածը կրել է Հովիվ մակդիր, ըստ այդմ էլ Սրբազան Բլուրն այս Աստծո հետ կապված դրվագներում հաճախ կոչվել է Հովվի Բլուր/Լեռ: Սրան համապատասխան, ^{d}DUMU.ZI Աստվածը կրել է Տեր Հովվի Բլրի տիտղոս: Այս փաստը ^{d}DUMU.ZI Աստծուն համապատասխանության մեջ է դնում ավանդական պատմագրության մեջ Հայոց անվանադիր նախահայր համարվող Հայկի

հետ: Հայոց ավանդական պատմագրության մեջ Հայկը ներկայացնում է ^{d}EN.KI=^{d}E$_{2}$.A=Հայ Աստծո էպիկական կերպարը: Հայերը Հայկի անունով են կոչել գիշերային Երկնքի ամենամեծ ու ամենագեղեցիկ համաստեղությունը՝ Օրիոնը: Սեպագրության ժամանակներում նույն համաստեղությունն անվանվել է SIPAD.ZI.AN.NA=«երկնային օրինավոր հովիվ» և կապվել ^{d}DUMU.ZI Աստծո հետ: Այստեղ SIPAD=շպետ=«հովիվ» բառն է:

^{d}DUMU.ZI Աստվածը միաժամանակ կրել է Տեր Arali-ի տիտղոս: Arali-ին Ստորերկրյա աշխարհի սեպագիր անվանումներից մեկն է, որի իմաստը դեռևս անհայտ է:

Դեռևս հստակ մեկնաբանություն չունի նաև ^{d}DUMU.ZI դիցանունը: Դիցանվան DUMU բաղադրիչը TUR սեպանշանի ընթերցումն է և կրում է «որդի, սերունդ, ժառանգ, ցեղակից» իմաստներ (աքքադերեն māru): DUMU=DU-MU բառի համար կարող ենք կազմել հետևյալ ընթերցումները.

DUMU=DU-MU = tu$_{3}$-mu = tum$_{2}$-mu = tum, tumm = տոհմ, տոմփ =«զարմ, ցեղ, տոհմ»,

= ar$_{6}$-mu = arm = (զ)արմ =«ազգ, ցեղ, տոհմ»,

որտեղ ar$_{6}$, tu$_{3}$, tum$_{2}$ վանկերը DU սեպանշանի հայտնի ընթերցումներն են:

TUR սեպանշանի tur, ṭur ընթերցումն էլ, որին վերագրվում է «մատղաշ որդի» իմաստ (աքքադերեն šerru), ներկայացնում է բնիկ հայերեն թոռ=«որդու որդին» բառը:

^{d}DUMU.ZI դիցանունը կազմող երկրորդ՝ ZI սեպանշանի հիմնական իմաստներից մեկն է «կյանք, կյանք տալ», որով սեպանշանի zi, şi$_{2}$ ընթերցումները նույնանում են բնիկ հայերեն ծին=«ծնունդ, ծագում, սերում, արգանդ» բառի հետ (ըստ շումերագետների, սեպագրության մեջ բառավերջի ռնգային հնչյունները չեն գրառվել):

Արդյունքում կարող ենք փաստել, որ ^{d}DUMU.ZI դիցանունը տառացի նշանակել է «ազգածին, ցեղածին աստված».

^{d}DUMU.ZI= ^{d}armu- şi$_{2}$ = ^{d}armaşin = Աստված (զ)Արմածին:

Այս տիտղոսը կարող էին կրել միայն ^{d}EN.KI=^{d}E$_{2}$.A=Հայ Աստվածը կամ նրա ավագ որդի Մարդուկ=Արմենակը, քանզի սեպագիր աղբյուրները միայն նրանց են ներկայացնում որպես մարդաստեղծ աստվածներ: Նրանց անուններից ու մակդիրներից են առաջացել Հայոց **Հայ, Արմեն, Գեղ, Արի, Քաջ** ինքնանվանումները:

Երբ Մարդուկ=Արմենակը հռչակվեց Աշխարհի ու մարդու Արարիչ, հորից նրան անցան շատ տիտղոսներ:

Քննարկվող նյութի տեսանկյունից կարևոր չէ ճշտել, թե հետագա շարադրանքում Հայ Աստծուն, թե նրա ավագ որդի Մարդուկ=Արմենակին կհամարենք ^{d}DUMU.ZI=Աստված (զ)Արմածին:

Եթե դիցանվան մեր այս մեկնությունը ճիշտ է, ապա սեպագիր աղբյուրներում այդ մասին պիտի վկայություններ լինեն: Վկայությունները կան և դրանք բերենք «ENMERKAR-ը և ARATTA-ի արքա-քուրմը» ասքից: Ասքի վերջում, ջրհեղեղին վերաբերող դրվագում խոսվում է մի ժողովրդի մասին, որն ապրում է Aratta երկրում, ում ^{d}DUMU.ZI Աստվածն առանձնացրել ու բարձրացրել է մյուսներից, դարձրել ընտրյալ ազգ:

Նույն դրվագում ARATTA-ի այդ ժողովուրդը մի անգամ ներկայացվում է ^{LU_2}URUxMIN անունով, իսկ երկրորդ անգամ՝ ^{LU_2}URUxMIN.LU անունով, որտեղ LU_2 սեպանշանը «մարդ, մարդկություն, ժողովուրդ» իմաստն արտահայտող ցուցիչն է:

URUxMIN գրությունը նշանակում է, որ min, mina, men_x ընթերցումներն ունեցող MIN սեպանշանը ներգծված է URU սեպանշանի մեջ և ընթերցման տեսանկյունից URUxMIN և URU.MIN գրելաձևերի միջև տարբերություն չկա: Պարզապես առաջին ձևի դեպքում կավե սալիկի վրա տեղ է խնայվում: URU սեպանշանի հիմնական իմաստն է «գյուղ, ավան, քաղաք» և հիմնականում գործածվել է որպես այդ իմաստների ցուցիչ: Սեպանշանի uru, eri, ere, er_4 ընթերցումները ներկայացնում են հայերեն առիճ,առինճ=«գյուղ, ավան» բառի «առ/ար» արմատը: Ուստի URUxMIN ցեղանունը ընթերցելի է (հիշենք, որ սեպագիր u-ն ընթերցվում է ա, ու, օ).

URUxMIN = uru-min, uru-men_x = aramin, aramen

= eri-min, eri-men_x = erimin, erimen

= er_4-min, er_4-men_x = ermin, ermen

Ակնհայտ է, որ այս ընթերցումները, որպես ցեղանուն, ներկայացնում են Հայոց Արամեն, Արմեն, Արմին անվանումը:

Ցեղանվան գրառման մյուս ձևում Արմեն ցեղանվանը կցված է LU սեպանշան: Վերջինս կրում է ինչպես LU_2 սեպանշանի վերը նշված իմաստները, այնպես էլ ունի eze = այծ, էծ =«այծ» և udu, udi = օդի =«այծ, ոչխար» ընթերցումներ: Սեպանշանների

այս իմաստներից բխում է, որ այն Armen/Armin անվանը կցագրված բաղադրիչ է և այծի «այծ (բարբառներում՝ ած, ազ)» անվանումով գաղափարագրվել է ազ(ն) =«ցեղ, ազգ, սերունդ, տոհմ» բառը, կամ՝ «-աց» հոլովական վերջավորությունը:

Հետևաբար

^{LU_2}URUxMIN.LU = Արմենազն կամ Արմենաց =«Արմեն ցեղին պատկանող»:

Սրան հավելենք այն գրավոր վկայությունը, որ Հայ Աստվածը և նրա ավագ որդի Մարդուկ=Արմենակը համարվել են Արմեն ցեղի հոգևոր և աշխարհիկ հովիվները (rā'imu ^{NAM} ^{LU_2}URUxMIN.LU):

Հայոց ավանդական պատմագրության մեջ, որի հիմքում ազգասերման հնագույն և դիցականացված պատկերացումների էպիկական շարադրանքն է, Արարիչ $^{d}E_2$.A=Հայ Աստվածը ներկայացվում է որպես ազգի անվանադիր նահապետ (=Հայկ), ում ավագ որդին Արմենակն է, ով էլ ներկայացնում է Մարդուկ, Մարաթուկ Աստծուն: Սեպագիր աղբյուրների տվյալները վկայում են, որ ^{d}EN.KI=$^{d}E_2$.A=^{d}Hai=Հայ Աստծո ավագ որդին՝ Արարիչ Մարդուկ Աստվածն է կրել Արամենակ/Արմենակ անունը.

^{d}URUxMIN×IGI = Ma-ru-tu-uk

Քանի որ URUxMIN=Արմեն, իսկ IGI=«աչք» սեպանշանի igi ընթերցումը նույնական է բնիկ հայերեն ակ(ն)=«աչք» բառի հետ, ապա Մարդուկի ^{d}URUxMIN×IGI անունը կարող ենք ներկայացնել հետևյալ ձևերով.

Uru-men$_x$-igi = Արամենակ

Eri-men$_x$-igi =Էրիմենակ

Er$_4$-men$_x$-igi = Էրմենակ

Uru-min-igi = Արամինակ

Eri-min-igi =Էրիմինակ

Er$_4$-min-igi = Էրմինակ,

որոնք ներկայացնում են Հայկի ավագ որդու Արմենակ անունը, որը հիշատակում է Մովսես Խորենացին:[5]

[5] . Հ. Աճառյանն Արմենակ անունը մեկնաբանում է նսեմացուցիչ երանգներով. «Խորենացու հնարած անուններից է, իբրև նահապետ Հայկազանց», իսկ Արմէն անունը համարում է Արմենակ-ի կրճատ ձևը: Սեպագրական տվյալները հաստատում են, որ Մովսես Խորենացին իրենից ոչինչ չի հնարել:

Այս սեպագիր աղբյուրի տվյալները վկայում են, որ Սասնա Ծռեր էպոսի Մարաթուկ, ավանդական պատմագրության Արմենակ և միջագետքյան Marduk անունները ներկայացրել են նույն Աստծուն՝ $^{d}E_{2}$.A=Հայ Աստծո ավագ որդուն:

Մեր վերականգնած Armen դիցանվան, որպես Մարդուկի անուններից մեկի, գոյությունը հաստատվում է սեպագիր աղբյուրների այլ տվյալներով ևս: Վկայված է Armen դիցանվան հետևյալ վանկագիր գրությունը՝ ^{d}Ar-man-nu, որը ճշգրիտ նույնական է Armannu=Հայք երկրանվան հետ:

Եթե հաշվի առնենք MAN սեպանշանի men_5, min_3 ընթերցումները, ապա կարող ենք կազմել դիցանվան հետևյալ տարընթերցումները.

^{d}Ar-man-nu = ^{d}Ar-men_5-nu = ^{d}Ar-min_3-nu = ^{d}Arman, ^{d}Armen, ^{d}Armin,

որոնք կարող ենք ընթերցել ինչպես Աստված Արմեն, այնպես էլ՝ Աստված Armannu=Հայքի:

^{LU_2}URUxMIN = Արմեն = «հայ» ցեղանվան վերաբերյալ սեպագիր աղբյուրների հաղորդած տվյալներից առանձնացնենք ևս երկուսը.

ա. Սեպագիր բառարանները ^{LU_2}URUxMIN=Արմեն և ^{LU_2}URUxMIN.LU = Արմենազն ցեղանունը բացատրում են աքքադերեն *lullû* բառով, որի համար վերծանվել է «առաջին, նախնական, նախնադարյան մարդ» իմաստ: Այսինքն, շումերական գրչության ողջ ժամանակահատվածում (մ.թ.ա. ~3000÷2000թթ) գործածված Արմեն =«հայ» ցեղանունը կրողները համարվել են աշխարհի առաջին մարդիկ:

բ. Երկրորդ փաստն այն վկայությունն է, թե Արմենազն մարդիկ Աստծո զարմից են.

^{LU_2}URUxMIN.LU DUMU DINGIR.RA.NA = Արմենազնը զարմն է Աստծո:

Այս արտահայտությունն էլ փաստում է, որ նույն ժամանակաշրջանում Արմեն=Հայ ազգը համարվել է Աստծո զարմ, այսինքն, համարվել է Աստծո կողմից արարված ընտրյալ ազգ:

Ինչպես տեսանք վերը, շումերական ասքը հաղորդում է, որ Արմեն=Հայ ազգն ապրել է Aratta երկրում: Սեպագիր աղբյուրները այս մասին պահպանել են նաև ուղղակի վկայություն, որ Aratta երկիրը Հայոց բնօրրանն է: Խոսքը վերաբերում է սեպագիր բառարաններում առկա հետևյալ նույնացմանը,

a-rat-tu = Aratta^{KI} = ŠU = ^{KUR}SU.U.HI

որը Միջագետքում Քաջանց տիրապետության ժամանակներին (մ.թ.ա. II հազ.) պատկանող երկրանունների ցուցակում է:

Այստեղ ձախից առաջին սյունյակում Aratta^{KI} երկրանվան վանկագիր ձևն է, իսկ երկրորդում՝ LAMxKUR.RU=Aratta^{KI} գրելաձևը: Երրորդ սյունյակի ŠU գրությունը նշանակում է, որ այդ սյունյակում կրկնվում է Aratta^{KI} երկրանունը: Մեզ հետաքրքրողը չորրորդ սյունյակի ^{KUR}SU.U.HI գրությունն է, որին էլ այժմ կանդրադառնանք:

Գրության առաջին՝ KUR սեպանշանն այստեղ «երկիր» նշանակող ցուցիչն է և մեր քննությունը կուղղորդենք երկրանվան մեջ SU սեպանշանի ընթերցմանն ու իմաստի բացահայտմանը: SU սեպանշանի արտահայտած իմաստների շարքում առանձնահատուկ տեղ են գրավում «ցեղ, ազգ, տոհմ, ընտանիք, ազգակցություն, արյունակցություն» իմաստները: Իսկ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ SU սեպանշանի այդ իմաստներն արտահայտելու համար երկլեզվյան սեպագիր բառարաններում ընդգրկված են իմաստի հետ առնչվող աքքադերեն բոլոր բառերը: Ստորև աղյուսակի տեսքով բերված են այդ տվյալները:

Շումերերեն	Աքքադերեն	Աքքադերեն բառի իմաստները
SU	kimtu	ցեղ տոհմ, ազգ, ազգակցություն
	nišūtu	ցեղ, տոհմ, ազգ, ժողովուրդ
	salātu	ամուսնական (խնամիական) ազգակցություն
	salūtu	ամուսնական (խնամիական) ազգակցություն
	šīru	տոհմ, ընտանիք, ազգակցություն,ազգակից
	şabu	ժողովուրդ, բանակ, բնակչություն
	damu	արյուն, արյունակցություն, ազգակցություն

Քանի որ SU սեպանշանն ընդգրկում է «ցեղ, ազգ, տոհմ, ընտանիք, ազգակցություն, արյունակցություն» իմաստների ողջ սպեկտրը, ապա նրա համար վերցնենք «ցեղ, ազգ» իմաստ, առանց խորանալու նրա ընթերցումների ու հայերեն զուգահեռների խնդրի մեջ: Հետևաբար ^{KUR}SU U-HI գրությունը կնշանակի «U-HI ցեղի, ազգի երկիր», այսինքն, երկրանվան U-HI բաղադրիչն է ներկայացնում այդ ցեղի, ազգի բուն անվանումը: Դառնանաք U-HI գրությանը և նրա ընթերցման մեջ ընդգրկենք U սեպանշանի ha$_3$ ընթերցումը և HI սեպանշանի i$_{11}$ ընթերցումը:

Արդյունքում կունենանք. U-HI=ha_3-i_{11}=hai=հայ:[6] Այժմ միավորելով երկրանվան երկու բաղադրիչները, կունենանք.

^{KUR}SU U-HI = ^{KUR}SU Hai = **Հայ ցեղի երկիր**, այսինքն՝ **Հայք**:

Քանի որ U սեպանշանի ha_3 ընթերցումն ունի ha_3=hai=հայ=«նայել, տեսնել», ապա ակնհայտ է, որ hai=հայ ցեղանունը գաղափարագրվել է hai=հայ=«նայել, տեսնել» ընթերցում և իմաստ ունեցող U սեպանշանով, իսկ HI=i_{11} վանկը պարզապես հնչյունական լրացում է: Հայ ցեղանուն և հայ=«նայել, տեսնել» համանունների զույգը պատկանում է միայն հայերենին և չի կրկնվում որևէ այլ լեզվում, ինչից հետևում է, որ

a-rat-tu = Aratta^{KI} = ^{KUR}SU Hai = **Հայ ցեղի երկիր**

սեպագիր գրությունը կազմվել է հայերենի դաշտում:

Այսպիսով պարզեցինք, որ ^{d}DUMU.ZI= զԱրմածին Աստծո ընտրյալ ազգը կրել է Արմեն ցեղանուն և Արմեն ցեղը բնակվել է Aratta^{KI}=Հայքում:

Վերադառնանք ջրհեղեղի պատմությանը, որի վերաբերյալ հիշյալ սեպագիր ասքում այսպիսի տողեր կան.

563. Aratta^{ki} ZI-DA KAB-BU-BA

564. ^{d}INANNA NIN ^{KUR}KUR-RA-KE$_4$

565. A MAH E$_3$-A-GIN$_7$ MU-UN-NA NIGIN$_2$ NIGIN$_2$

566. LU$_2$-BI-NE LU$_2$-LU$_2$-TA DAR-A

567. LU$_2$ ^{d}DUMU-ZI-DE$_3$ LU$_2$-TA E$_3$-A-ME-EŠ

Առանց կանգ առնելու բառերի ու անունների ընթերցումների ճշգրտման վրա, բերենք այս տողերի թարգմանությունը.

Հայոց երկիրը (=Aratta^{KI}) աջից, ձախից,

^{d}INANNA-ն՝ Տիկինը Armanu երկրի,

Ջրհեղեղի ջրերը վանեց ողջ շրջապատից,

---

[6] . U սեպանշանի ha-a=ha_3 ընթերցումն ունի «նայել, տեսնել» և «աչք» իմաստներ ու համապատասխանում է բնիկ հայերեն հայիլ=«նայել, դիտել» բայի «հայ» արմատին: Այս արմատից են նաև հայող=«բախտ նայող, գուշակ», հայարան=«աչք» , հայեակ=«դէտ, տեսուչ, վերակացու» և այլ բառեր: Շումերերենում «հայիլ» բառը գործածվել է հենց այս իմաստներով:

Այն տարածված է եղել անձնանունների մեջ, որոնք կազմված են հայիլ+դիցանուն=«տվյալ աստծուն նայող» բանաձևով. Ha-‘-il-^{d}Na-na-a, Ha-il-DINGIR, Ha-il-A-nu և այլն: Չիկագոյի համալսարանի հրատարակած ասուրերենի բառարանը բառը համարելով աքքադերեն, դնում է ha’ilu ձևով և գրում, որ իմաստն անհայտ է: Իրականում դա հայերեն «հայիլ» բառն է, որը երկլեզվյան բառարաններում բերվում է , որպես աքքադերեն barū=«նայել, դիտել, հսկիչ, դէտ, տեսուչ» և bārū =«գուշակ, գուշակել» բառերի շումերերեն, իմա՝ հայերեն զուգահեռ:

Քաջանց ցեղը մարդկանցից զատեց,

Զարմածին Աստծո ցեղը մարդկությունից առանձնացրեց:

Զարմածին Աստծո սիրեցյալ և Armanu երկրի տիրուհի ^{d}INANNA դիցուհին Հայքից հեռացնում է ջրհեղեղի աղետաբեր ջրերը, մարդկությունից առանձնացնում է Զարմածին Աստծո ցեղին և փրկում ջրհեղեղից: Այլ կերպ ասած, ջրհեղեղի ջրերը չեն հասնում Aratta^{KI}= Հայոց երկիրը և նրա բնակչությունը, որ Աստծո ընտրյալ ազգն էր, ջրհեղեղի կործանարար ազդեցությանը չի ենթարկվում: Ի վերջո, ջրհեղեղից տապանով փրկված առաքինի մարդկանց խումբը հանգրվան է գտնում Հայոց երկրում, ինչի մասին վկայում են բոլոր հին աղբյուրները: Մ.թ.ա. 3-րդ հազ. մեզ հասած սեպագիր ասքում առկա այս տվյալները նաև փաստում են, որ աստվածները երբ որոշում են ջրհեղեղի միջոցով կործանել անառակության ճանապարհը բռնած մարդկությանը, նրանցից զատում են առաքինի Հայ=Արմեն ցեղին և նրանց երկիրը հեռու պահում ջրհեղեղից:

Եթե մտովի պատկերացնենք ջրհեղեղի այս նկարագրությունը, ապա կունենանք հետևյալ պատկերը. ողջ աշխարհը ծածկված է ջրհեղեղի ջրերի տակ և միայն Aratta=Հայքն է կանգնած ջրերի մեջ, որպես կղզի: Այսինքն, ջրհեղեղի միջոցով աշխարհը բերվել է իր նախասկզբնական վիճակին, երբ տիեզերական ծովում միայն նախասկզբնական Երկիրն էր՝ Սրբազան Բլուրը, որպես աստվածների և նրանց արարած Արմեն=Հայ-երի բնակության վայր:

Սա է պատճառը, որ ոչ միայն Հայոց բանահյուսությունը, այլ ընդհանրապես Հայոց ողջ մշակույթը, ջրհեղեղի մասին ոչ մի հիշատակում կամ նույնիսկ ակնարկ չունի:[7] Եթե այս փաստը դիտենք իրականում տեղի ունեցած ջրհեղեղի տեսանկյունից, ապա ընդունելի է շումերական ասքի այն մեկնաբանությունը, որ ջրհեղեղի կործանարար ազդեցությունը չի հասել Հայքի բուն տարածքին: Հետևաբար նաև բնական է որ բոլոր աղբյուրները Հայքն են նշում որպես փրկության վայր: Ջրհեղեղից փրկվածները թեև ինչ որ կերպ Հայք են հասել, սակայն ջրհեղեղի մասին սրանց պատմածները Հայոց հիշողության մեջ չի պահպանվել:

Մ.թ.ա. 3÷1 հազարամյակների սեպագիր աղբյուրներում Հայքը հիշատակվել է տասից ավել անուններով (HA.A, ŠUBUR, ARMANNU, URARAT, ARI, KAŠ.EA.NA և այլն): Հայքի անվանումների այս շարքին պատկանող A.RAT.TA երկրանվան գրության այս ձևի ընթերցման ու մեկնաբանման երեք տարբերակներ.

A-rat-ta^{KI} = Arat^{KI} = Առատ երկիր = «հարուստ, պերճ, բարգավաճ, բարեգործ երկիր»,

= A (a)rat^{KI} = Ջրառատ երկիր (A=«ջուր») = որպես Առաջավոր Ասիայի խոշոր

[7] . Բացառություն է Նախիջևան տեղանունը, որն ավանդաբար մեկնաբանվել է որպես ջրհեղեղից փրկված մարդկանց առաջին բնակության վայր (նախ իջևան): Այս մասին հնագույն վկայությունը մեզ է հասել հրեա մատենագիր Հովսեպոս Փլավիոսից (I դար): Բառի այս մեկնաբանությունը կարող է ճիշտ լինել, սակայն վերաբերվել միայն ջրհեղեղից փրկվածներին, որպես նրանց առաջին բնակավայրի, որտեղից նրանք հետագայում դուրս եկան և տարածվեցին աշխարհում:

գետերի ակունքների երկիր: Ճիշտ նույն կազմությունն ունի Եփրատ
գետանունը. Ապ-առատ>Ապառատ>Եփրատ=«ջրառատ»
(ap, ab=ապ=«ջուր, ծով»),

= Arat^KI = Արատ երկիր = «քրմերի, հավատքի հետևորդների երկիր»,

= Ar atta^KI = (Ar = Ար =«դիցանուն, արարիչ», adda, atta, ad =«հայր, ծնող»)

=« ծնող/հայր արարչի երկիր»:

Aratta^KI երկրանվան այս բոլոր մեկնաբանություններն ընդունելի են հիմա, ընդունելի են եղել նաև սեպագրության ժամանակներում: Ինչ վերաբերում է նույն գրության ընթերցումների ու իմաստների բազմազանությանը, ապա դա հետևանք է վանկա-գաղափարագրության առանձնահատկությունների:

Թեև հրատարակված սեպագիր բառարաններում դեռևս ուղղակի վկայություն չկա, որ «ջուր, գետ, հոսանք» և «անել, կատարել» իմաստները կրող A սեպանշանն ունի ar, ara =ար, արա ընթերցում, սակայն որոշ փաստեր վկայում են դրա գոյության մասին (հմմտ. նաև հայերեն ար, արա=«անել, կատարել» և առու=«ջրի հոսանք»):

Նման ընթերցման գոյության դեպքում երկրանվան վերի գրության համար կարող ենք կազմել մի նոր ընթերցում. A-rat-ta^KI = Ara-rat-ta^KI =Ararat^KI = Արարատ երկիր: Ուստի այս պարագայում երկրի Արարատ անվանումը դառնում է Aratta^KI անվան ընթերցման մասնավոր դեպքը, կրելով «Ար (աստծո) քրմերի երկիր» կամ «Արարչի քրմերի երկիր» իմաստ:

Aratta երկրանունը նաև գործածվել է որպես հասարակ գոյական կամ ածական, որոնց արտահայտած իմաստները, ըստ սեպագիր բառարանների, յուրահատուկ են Սրբազան Բլրին: Բերենք դրանցից մի քանիսը.

aratta = *kabtu* =««կարևոր, էական գլխավոր; առատ, լի, հարուստ; մեծ, ուժեղ»

= *tanattu* =«փառք, հռչակ, շքեղություն, ազնվական»

= *šadû* =«լեռ»

= *šubtu* =«նստատեղ, աթոռ, գահ»

= *arattu* =«գերազանց, հոյակապ, բարձրորակ»:

Այս իմաստները ոչ թե բուն aratta բառի իմաստներն են, այլ բխեցվել են Հին Աշխարհում Aratta երկրի ունեցած դիրքից ու կարգավիճակից և վերագրվել երկրանվանը: Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ ճիշտ նույն կերպ են բնութագրվել Aratta=Հայքի բնիկները, Զարմածին Աստծո ընտրյալները՝ հայերը: Սեպագիր աղբյուրներն այդ մասին ահա թե ինչ են հաղորդում.

DUMU KUR.RA = DUMU kab-tu$_2$

Այստեղ, ձախ կողմում, մեզ ծանոթ DUMU=(զ)արմ=«ազգ, ցեղ, տոհմ, սերունդ» բառն է և KUR=Armanu երկրանունը (սեռական հոլովաձևն է KUR.RA), իսկ աջ՝ աքքադերեն համարվող կողմում, նույն *kabtu* =«կարևոր, էական, գլխավոր» բառն է, որպես այդ զարմի բնութագիր:

Սեպագիր աղբյուրները նաև վկայում են, որ այն քաղաքակրթությունը, որն այսօր աշխարհին հայտնի է «շումերական» անունով, հիմնել է այդ կարևոր, գլխավոր, ազնվական զարմը, որը Aratta=Armanu=Հայք երկրի բնիկն է: Ստորև բերված օրինակները վաղ հին բաբելական ժամանակներում (մ.թ.ա. 2000÷1800թթ) վերագրառվել են ավելի հին շումերական աղբյուրներից: Երկու օրինակներում էլ հեղինակը դիմում է ^{d}EN.LIL$_2$ Աստծուն:

	I	II
շումերերեն	DUMU KUR-ra KI.EN.GI-še$_3$ MU.UN.ED$_3$	A KUR-ra KI.EN.GI-ra I.NI.NI
աքքադերեն	*māri ša$_2$-di-i a-na mātu tušēridu*	*rihūt KUR-i ana māti tarhā*
թարգմանություն	(Էնլիլ), Armanu-ի զարմին Շումեր իջեցրիր:	(Էնլիլ), Armanu-ի ժառանգներով Շումերը հեղեղեցիր:

Այստեղ KI.EN.GI-ն Շումերի անվանման սեպագիր գրելաձևն է:

Aratta=Armanu=Հայքի բնիկները Եփրատի ու Տիգրիսի հովիտներով իջնելով Միջագետք, յուրացնում են տեղի բարեբեր ու ջրառատ հողերը, հիմնում են Միջագետքի առաջին բնակավայրերը, հիմնում են նոր քաղաքակրթական օջախ: Անշուշտ նրանք իրենց հետ բերում են իրենց լեզուն, գիրը, մշակույթը, գիտելիքները և իրենց աստվածների պաշտամունքը, որոնք էլ դրվում են ապագա քաղաքակրթության հիմքում:

Այսպիսով, մ.թ.ա. 3÷1 հազ. սեպագիր աղբյուրներում Հայքի IDIM, KUR, ARATTA անվանումներին տրված բնութագրերը վկայում են, որ Հին Աշխարհում տարածված աշխարհընկալումային պատկերացումներում Հայքը ներկայացվել է որպես տիեզերական օվկիանոսում գտնվող նախասկզբնական Սրբազան Երկիր և աստվածների բնակավայր, որտեղ արարվել է Զարմածին Աստծո ցեղը, ով աստվածներից ստացած գիտելիքներով Հայքում ստեղծել է մարդկային քաղաքակրթության միակ առաջնային օջախը:

Նախասկզբնական երկիրը համարվել է սրբազնագույն տարածք, իսկ նրա մոդելը ներկայացվել է արհեստական կամ բնական բլրի տեսքով, որի վրա կառուցվել է որոշակի Աստծո տաճար կամ բագին (զոհասեղան): Այդ բլուրները ևս համարվել են սրբազան և սեպագիր աղբյուրներում ներկայացվել են Du$_6$ kuk = Դու կոկ, ինչը տառացի նշանակել է «կոկիկ, մաքուր, զարդարուն բլուր»:

Այս քննությունից հետո դառնանք տապանի հանգրվանի լեռան/երկրի KURNI.MUŠ անվանմանը: Թե անվանման իմաստը, թե լեռան/երկրի ճշգրիտ տեղայնացումն առ այսօր անհայտ են:

7. KURNI.MUŠ

Բացի ջրհեղեղի պատմության բաբելական պատմությունից, այս տեղանունը հիշատակվում է նաև Ասորեստանի թագավոր Աշուրնասիրպալ Բ-ի (մ.թ.ա. 883÷859թթ) հինգ արձանագրություններում: Ըստ Աշուրնասիրպալ Բ թագավորի արձանագրությունների, նրա արշավանքների աշխարհագրությունն ընդգրկել է Ասորեստանից հարավ-արեվելք ընկած տարածքները (ժամանակակից Իրաքի հյուսիս-արեվելքը): Ելնելով դրանից, որոշ հետազոտողներ KURNI.MUŠ տեղանունը նույնացրել են ժամանակակից Փիր Օմար Գուդրուն լեռան հետ, որն աննշան զագաթ է հարավային Զագրոսի արեվմտյան փեշերին: Ասորեստանյան արձանագրությունները մեզ տրամադրում են երկու կարևոր փաստեր, որոնցից բխում է, որ տապանի հանգրվանի լեռան նույնացումը Փիր Օմար Գուդրուն լեռան հետ թյուրիմացություն է:

Այդ փաստերն են.

ա. KURNI.MUŠ տեղանունը հիշատակվում է միայն Աշուրնասիրպալ Բ թագավորի հինգ արձանագրություններում,

բ. իր արձանագրություններից մեկում Աշուրնասիրպալ Բ-ն նշում է, թե KURNI.MUŠ լեռը տեղացիներն անվանում են KURKI.NI.BA:

Այս փաստերից բխում է, որ KURNI.MUŠ ավանումը հնարվել է Աշուրնասիրպալ Բ-ի կամ նրա զրագրի կողմից մի լեռան համար, որը տեղացիների լեզվում այլ անվանում է կրել: Այն կարող է լինել տեղական անվանման աքքադերեն թարգմանությունը կամ առասպելական լեռան տեղայնացման անհաջող փորձ:

Քանի որ Աշուրնասիրպալ Բ-ն իրական աշխարհագրության լեռ է հիշատակել, ապա լեռան անունը հարկ է ընթերցել NI և MUŠ սեպանշանների այլ՝ ջրհեղեղի KURNI.MUŠ անվան համար օգտագործված հնչյունական արժեքներից տարբեր, հնչյունական արժեքներով և արդյունքում նույն սեպանշանով գրառված անվանումները կունենան բոլորովին տարբեր ընթերցումներ ու իմաստներ:

Աշուրնասիրպալ Բ-ի արձանագրություններում KURNI.MUŠ անվան առկայությունը պատճառ է դարձել եւս մի թյուրիմացության: Որոշ հետազոտողներ ելնելով այն փաստից, որ տեղանունը հիշատակվում է Ասորեստանի թագավորի աքքադերեն արձանագրության

մեջ, ենթադրել են, թե անվանումը աքքադերեն է և MUŠ=«օձ» սեպանշանի համար վերցրել են şir ընթերցում, որը ներկայացնում է աքքադերեն *şēru*=«օձ» բառը: Արդյունքում, այսօր առավել տարածված է լեռան/երկրի KURNişir=Նիցիր լեռ կեղծ անվանաձևը:

Այժմ դառնանք այն հարցին, թե ինչպես ընթերցել տապանի հանգրվանի KURNI.MUŠ լեռան/երկրի անվանումը: Տեղանունը կազմված է երկու սեպանշանից.

NI - այս սեպանշանի հիմնական իմաստն է «յուղ», որի համար վերծանվել են i_3, ia_3 ընթերցումներ, որոնք ներկայացնում են բնիկ հայերեն «իւղ» բառը (բարբառներում՝ եղ, էղ, յեղ, յէղ, յիղ): NI=, սեպանշանը ծագել է յուղի կավէ ամանի սխեմատիկ պատկեր ներկայացնող նշանագրից (, , ,):

MUŠ - այս սեպանշանի հիմնական իմաստն է «օձ» և սեպանշանը (,) ծագել է օձ պատկերող նշանագրից ():

Այժմ հարց է առաջանում, թե ինչ կապ ունեն «յուղ» և «օձ» նշանակող բառերը տապանի հանգրվանի լեռան/երկրի անվան հետ: Հարցին պատասխանելու գործում մեզ ուղղորդում են վանկա-գաղափարագիր գրության կանոնները. լեռան/երկրի անվան մեջ «յուղ» և «օձ» նշանակող բառերը հանդես են գալիս որպես վանկեր:

Այսօրվա դրությամբ NI սեպանշանի համար հայտնի են 40 ընթերցումներ, իսկ MUŠ սեպանշանի համար՝ 18 և մեր խնդիրն է ընթերցումների այս բազմությունից ընտրել այն երկու ճիշտ վանկերը, որոնցով կազմվել է KURNI.MUŠ տեղանունը:

Դրա համար նախ պիտի ճշտենք, թե ինչ ենք փնտրում և ինչու ենք հենց դա փնտրում: Կազմենք այն փաստերի շարքը, որոնք մեզ պիտի ուղղորդեն տեղանվան ճիշտ ընթերցման հարցում.

ա. Ջրհեղեղի պատմության հայտնի բոլոր տարբերակներում փրկության վայր է նշվում Հայքը և բաբելական տարբերակը բացառություն չի կարող լինել:

բ. Դիցաբանական առումով Հայքը նույնանում է Սրբազան Բլրի հետ և նրա առաջնային բնութագիրը աստվածների բնակության վայր լինելն է:

գ. Վերը տեսանք, որ մեր քննության նյութի հետ կապված սրբազան և պատմական տեղանունները հայերեն կազմություններ են և KURNI.MUŠ անվանումը ևս պիտի լինի հայերեն:

Հիմք ընդունելով այս կետերը, անցնենք NI և MUŠ սեպանշանների այն ընթերցումների ընտրությանը, որոնք կբավարարեն այդ կետերի պահանջներին:

Նշեցինք, որ NI սեպանշանը «իւղ» բառի գաղափարագիրն է: Կաթից յուղի ստացումը երեք հիմնական փուլ ունի.

I. Հում կաթի սերը հավաքվում և պահվում էր այծի կամ ոչխարի մորթուց պատրաստված տիկի մեջ: Ծակոտկեն տիկի մեջ սերը ջրաքամվում էր և մնում էր յուղային մասը:

II. Հաջորդ փուլում տիկում հավաքված սերը հարվում է խնոցու մեջ և ստացվում է կարագ: Որպեսզի կարագը չփչանա, աղվում է և պահվում տիկի կամ կավե ամանի մեջ:

III. Աղ դրված կարագը հալում են և պահում կավե ամանների մեջ:

Քանի որ յուղը, որպես առարկա, չունի հստակ պատկեր, ապա յուղը պահելու կավե ամանի սխեմատիկ պատկերն է դարձվել է «յուղ» իմաստը գաղափարագրող նշանագիր, որից էլ ստացվել է NI սեպանշանը: Ինչպես տեսանք, տիկը ևս կարևոր դեր է խաղացել յուղի ստացման պրոցեսում և բնականաբար NI սեպանշանի ընթերցումներիմեջ է մտցվել նաև dig, diq, dik, tiq_2=տիկ բառը:

Հայերեն (բարբառներում՝ դիգ, տիգ, տէկ) բառը ծագել է դիգ=«այծ» բառից, քանզի առաջին տիկերը պատրաստվել են այծի մորթուց: Հայերենում տիկ=«տկճոր» և դիգ=«այծ» բառերը համանուն են դիք=«աստված» բառին: Դիք=«աստված» բառն առարկայական չէ և հնարավոր չէ նրա պատկերի հիման վրա միարժեք ընթերցվող նշանագիր ստեղծել: Այդ իսկ պատճառով, սկսած վերին հին քարի դարում փորագրված Սյունիքի ժայռապատկերներից, դիք=«աստված» բառը գաղափարագրվել է այծի կամ տիկի պատկերով:

Շումերերենում, ապա սեպագրության գործածության ողջ ընթացքում, «աստված, աստվածություն, դեվ, ոգի» նշանակող բառերը հիմնականում գաղափարագրվել են AN սեպանշանի միջոցով: Որպես «աստված, աստվածություն» իմաստի ցուցիչ է գործածվել AN սեպանշանի diger, diqer = դիքեր =«աստվածներ» ընթերցումը: Իսկ որպես «դեվ, ոգի (բարի կամ չար)» իմաստի ցուցիչ՝ գործածվել է սեպանշանի dewer, diwer = դեւեր =«դևեր, ոգիներ» ընթերցումը:[8]

Որպես բուն «աստված» նշանակող բառ, գործածվել են AN սեպանշանի el_3, il_3, ili, ilu ընթերցումները, որոնք նաև կրել են «բարձր, բարձրանալ» իմաստ: Սրանք համապատասխանաբար ներկայացրել են բնիկ հայերեն եղ=eł=«գոյություն» և ել=el=«ներսից դուրս գալը, բարձրանալը, բարձր» բառերը: Շումերերենից el, il, ili, ilu=«աստված» բառն անցել է աքքադերենին (*ilu*=«աստված»), իսկ վերջինից՝ մյուս սեմական լեզուներին (եբրայերեն el, ēli, արաբերեն īl և այլն):

«Աստված» նշանակող բառի վանկագիր գրությունը հիմնականում իրականացվել է NI սեպանշանի կրկնակի գրությամբ, օգտագործելով նրա i_3 (=եղ, իւղ) և li_2 ընթերցումները.

---

[8] . Այս փաստի առկայության պայմաններում հայերեն «դեւ» բառը միջին պարսկերեն dēv-ից փոխառություն դնելն անհեթեթություն է: Տարածաշրջանում իրանական ցեղերի հայտնվելուց (մ.թ.ա. 8-րդ դար) առաջ առնվազն 2000 տարիների ընթացքում «դեւ» բառը գործածական է եղել:

NI.NI = i_3-li_2 = ili = «աստված»:

Ակնհայտ է, որ գրությունը հիմնված է եղ, իւղ=«յուղ» և եղ=«գոյություն» բառերի համանունության վրա: Սրան էլ հավելենք, որ NI սեպանշանն ունի AN սեպանշանի ili=«աստված» ընթերցմանը համանուն ili_x ընթերցում:

Ամփոփելով, փաստենք, որ NI սեպանշանը կրել է «աստված» իմաստ և ունեցել է diq=դիք ընթերցում, որն էլ կարող ենք վերցնել որպես NI սեպանշանի մեզ անհրաժեշտ ընթերցում:[9] Հայերեն դիք=«աստված» բառի արմատն է «*դի», որին համապատասխան NI սեպանշանն ունի di_x/de_x ընթերցում:

NI.NI կրկնակի գրության i_3-li_2 ընթերցումը նաև գործածվել է «մարդ» իմաստի համար (աքքադերեն *amēlu*): Աքքադերեն *amēlu* բառի իմաստների շրջանակի մեջ էին մտնում նաև ցեղանունները, արյունակցական տերմինները:

Իմաստների այս շրջանակում NI սեպանշանի ընթերցումներից NI.NI կրկնակի գրության համար կարող ենք կազմել հետևյալ բառերը.

NI.NI = ha_x-i_3, ha_x-ia_3 = hai = հայ =Հայոց ինքնանվանումը

= ha_x-u_x = haw = հաւ =«պապ, նախնի»

= ha_x-ni = han, hani = հան, հանի =«տատ, պապ, նախնի»:

Hai=Հայ բառը, որպես դիցանուն և Հայ Աստծո անվան վանկագիր ձև, հիմնականում գրառվել է HA և NI սեպանշանների միջոցով. ^{d}HA.NI=^{d}Ha-i_3=^{d}Hai= Աստված Հայ: Այս ընթերցումների գոյությունը հիմք է տալիս կարծելու, որ մեզ կարող է անհրաժեշտ լինել նաև NI սեպանշանի ha_x ընթերցումը:

Այժմ նույն խնդիրը լուծենք MUŠ սեպանշանի համար: Սեպանշանի MUŠ և WUŠ ընթերցումների վանկագիր MU-UŠ և WU-UŠ ձևերից առանց դժվարության վերականգնվում է նաև հայերեն «օձ» բառի գրաբարյան «աւձ» ձևը (aw=աւ=o).

MU-UŠ = ia_5-uz_2, i_{14}-uz_2, ia_5-$uş_2$, i_{14}-$uş_2$ = iawz, iuz, iawş, iuş = ներկայացնում են «օձ» բառի բարբառային «էօձ, էօծ, էօg» ձևերը,

WU-UŠ = a_3-uz_2, a_3-$uş_2$, a_3-uś = awz, awş, awś = աւձ, աւg, աւծ = օձ, og, օծ:

Հայերենում աւձ=օձ բառը (բարբառներում՝ օձ, օծ, og, էօձ, էօծ, էօg, ուg) համանուն է աւծ=օծ=«օծման յուղ, օծող, պարարտ» բառին, հոգնակի սեռական հոլովի «-ng, -իւg, -ուg» վերջավորությանը և տեղանուն ցույց տվող «-ng» ածանցին (դարբն-*ng*, դպր-*ng*, խոհան-*ng* և այլն):

---

9 . NI սեպանշանի dig, diq, dik, tik, tiq_2=դիգ, դիք, տիկ ընթերցումները բարդ բառերի մեջ գործածվել են որպես վանկեր: Հաստատենք մի օրինակով: Շումերերենում տարածված էր NIN=«տիկին, տիրուհի» բառը, որը հիմնականում գործածվել է որպես աստվածուհիների տիտղոս: Բառի վանկագիր NI-IN ձևից ստանում ենք NI-IN = tik-in = tikin = Տիկին բառը:

Այս փաստերը հիմք ընդունելով, MUŠ սեպանշանի համար վերցնենք «օճ, օց, օծ» ընթերցումներ: Այսպիսով նշեցինք NI և MUŠ սեպանշանների այն ընթերցումների շրջանակը, որոնք կօգտագործենք ^{KUR}NI.MUŠ տեղանվան ընթերցման ժամանակ:

Անցնենք տեղանվան ընթերցմանը և որպես առաջին տարբերակ, վերցնենք NI սեպանշանի diq=դիք, di_x/de_x=դի/դե ընթերցումները և MUŠ սեպանշանի համար՝ «ոց, ուց, իւց» ընթերցումներ.

^{KUR}NI.MUŠ = դիք-ոց երկիր = Դիքոց երկիր =«աստվածների երկիր»

= դի-իւց երկիր = Դիւց երկիր =«աստվածների երկիր»

= դի-ոց երկիր = Դիոց երկիր =«աստվածների երկիր»

= դի-ուց երկիր = Դիուց երկիր =«աստվածների երկիր»

= դի-ւաց երկիր = Դիւաց երկիր =«ոգիների, դևերի երկիր»

Ընթերցման վերջին տարբերակում MUŠ սեպանշանի համար վերցրինք նրա wuš ընթերցման wuş տարբերակը ($wuš=wu-uš=wu-uş_2=wuş$), որը կարող ենք ընթերցել «ւաց, ւուց, ւոց»:

Տեղանվան ընթերցման երկրորդ տարբերակում NI սեպանշանի համար վերցնենք նրա ha_x = հա ընթերցումը.

^{KUR}NI.MUŠ = $^{KUR}Ha_x$-iuş = ^{KUR}Haiuş = Հայոց երկիր

= $^{KUR}Ha_x$- wuş = ^{KUR}Hawuş = Հաւուց երկիր

Այսպիսով ջրհեղեղի բաբելական պատմության մեջ հիշատակվող ^{KUR}NI.MUŠ երկրի/լեռան անվանման համար ստանում ենք հետևյալ ճշգրտված ընթերցումները.

1. Դիւց երկիր = «աստվածների երկիր»
2. Դիւաց երկիր = «ոգիների, դևերի երկիր»
3. Հաւուց երկիր = «նախնիների երկիր»
4. Հայոց երկիր = «Հայք, Հայոց բնօրրանը»

Այսպիսով, տապանի հանգրվանի երկրի առաջին երեք անվանումները Սրբազան Բլրին՝ նախասկզբնական Երկրին, բնութագրող անվանումներն են, իսկ չորրորդ անվանումը փաստում է, որ այդ բոլոր բնութագրերը վերաբերել են Հայքին, որտեղ Աստծո արարած ու ընտրյալ մարդիկ՝ հայերը, ապրել են աստվածների հետ: Ավելի ուշ, Հին կտակարանում, նույն միտքն է արտահայտվում. Տիգրիսի և Եփրատի ակունքներն ընդգրկող Հայքը ներկայացվում է Եդեմ անունով, որտեղ ապրում են Աստվածը և նրա արարած մարդը՝ մարդկության նախահայր Ադամը:

Կատարենք մի վերջին ճշգրտում:

Ջրհեղեղի բաբելական պատմությունը Գիլգամեշին նվիրված ասքի մի հատվածն է (11-րդ պնակիտ), որում ^{KUR}NI.MUŠ անվանումը հիշատակվում է հետևյալ

կապակցության մեջ. KUR-u$_2$ ^{KUR}NI.MUŠ: Այստեղ ^{KUR}NI.MUŠ անվան KUR-ը «երկիր, լեռ» իմաստի ցուցիչն է և ցույց է տալիս, որ NI.MUŠ գրությունը երկրի կամ լեռան անվանում է: Այս պարագայում հետազոտողների համար անհասկանալի է մնում երկրանվանը նախորդող KUR-u$_2$ գրության ընթերցումն ու իմաստը: Տասնեակ հետազոտողներ են փորձել մեկնաբանել KUR-u$_2$ գրության իմաստը, սակայն ոչ մեկի մեկնաբանությունը մյուսների համար ընդունելի չի եղել:

Իսկ ճշգրիտ մեկնաբանությունն ինքն իրեն երևակվում, բացահայտվում է, երբ մեկնաբանության հիմքում դրվում է աշխարհի ամենասրբազան տարածքի՝ Հայքի գործոնը:

Վերը տեսանք, որ KUR սեպանշանը ներկայացրել է Հայքի Armanu, Armen անվանումը: Ուստի KUR սեպանշանին կցագրված -u$_2$ վանկը կարող ենք դիտել որպես հնչյունական լրացում, որը հուշում է թե KUR սեպանշանի համար հարկ է վերցնել –u հնչյունով ավարտվող ընթերցում: Հետևաբար կարող ենք վերցնել սեպանշանի Armanu կամ ŠADU = ŠA-DU = Ara-men$_3$ = Aramen, Armen ընթերցումը:

Արդյունքում կունենանք հետևյալ մեկնաբանությունը. ջրհեղեղից փրկվածների տապանը հանգրվանում է

KUR-u$_2$ ^{KUR}NI.MUŠ = Արմեն՝ Դիւց երկրում

= Արմեն՝ Հայոց երկրում:

Սրանով ավարտենք աշխարհի ամենասրբազան տարածքի՝ Հայքի մասին այս ակնարկը, որում ընդգրկեցինք միայն ջրհեղեղի պատմության մի քանի առանցքային տվյալներ:

Վերջում բերենք Հայքի տարածքում գտնված մի դրոշմակնիքի կամ հմայիլի պատկեր: Այն բազալտե տափակ հղկված գլաքար է, որի երկու երեսներին արված են փորագրություններ: Առաջին երեսին երեք պատկերագրեր են. ութ ճառագայթներով արևանշան, ցլի պատկեր և երկգագաթ լեռ: Գլաքարի հակառակ երեսին մեզ ծանոթ շումերական DU$_6$ նշանագիրն է՝ ճառագայթող, բոցավառվող Սրբազան Բլուրը: Այս նշանագրերի ընթերցումն է.

ա

բ

Արեգակնաբուխ երկգագաթ լեռ՝ Դուին,

որը սրբազան Հայքի բնութագիրն է: